Ազգ
Azg
7 ՄԱՅԻՍ 2011 ՇԱԲԱԹ 82(4701)
ISSN: 1829-1651

# Մայիսի 9 մեր հաղթանակների օրն է

Իրավամբ մայիսը հայ ժողովրդի պատմության մեջ մնել է որպես հաղթանակների ամիս, երբ հայ ռազմիկը իր կյանքի ու արյան գնով կանգնեցրեց թշնամու առաջխաղացումը եւ կերտեց հաղթանակը: Այդպես էր Հայրենական մեծ պատերազմի տարիներին, այդպես էր նաեւ Արցախյան ճակատում:

Ղարաբաղում հաղթանակ նվաճած տղաները Մեծ հայրենականի վետերանների զավակները եւ թոռներն էին, ովքեր, ոգեւորված իրենց պապերի սխրանքով, չնահանջեցին եւ չերկնչեցին ոսոխի առաջ: Եվ եթե Հայրենական պատերազմի գագաթնակետը Բեռլինի գրավումն էր եւ հայկական քոչարին Ռայխստագի պատերի տակ, ապա Արցախյան գոյամարտի պարծանքը հայկական հինավուրց բերդաքաղաք Շուշիի ազատագրումն էր:

Մայիսյան այս հրաշագեղ տոնի կապակցությամբ Արմենական-Ռամկավար ազատական կուսակցությունը շնորհավորում է Հայրենական մեծ պատերազմի եւ Արցախյան հերոսամարտի բոլոր վետերաններին եւ ազատամարտիկներին, խոնարհվում իրենց կյանքը հայրենիքին զոհաբերած մարտիկների հիշատակի առջեւ:

*ԱՐՄԵՆԱԿԱՆ ՌԱԿ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ*

# Ո՞վ կդառնա նոր արմատական ընդդիմություն

**ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ**

Կրպակավարները սկսել են բողոքել, թե այն թերթերը, որ «զանգվածաբար» վաճառվում էին, վերջին ամսվա ընթացքում մնում են կրպակներում: Նրանք բերում էին այս կամ այն թերթի մեկ ամիս առաջվա ու հիմիկվա վաճառքի թվերը, որոնք խոսուն են: Մի երկու կրպակից էլ հարցրի՝ նույն պատկերն էր : Սա ցուցիչ է: Իհարկե՝ թերթերի վաճառքի մշտական մոնիթորինգները քաղաքական իրադարձությունների վերեւ-ներքեւ կորերի ժամանակ վաճառքի ակտիվացում-նվազում միշտ էլ արձանագրել են: Սակայն այն պարագայում, երբ ՀԱԿ-ը դեռ մեկ միտինգ առաջ բավական բազմություն էր հավաքում, ՀԱԿ-ամետ թերթերը լավ վաճառվում էին, իսկ հիմա, երբ երկխոսում է իշխանության հետ՝ վաճառքի անկման մեծ ցուցիչ են ցույց տալիս: Սա խոսում է ակտիվ զանգվածի հիասթափության մասին՝ իշխանություն-ՀԱԿ երկխոսության ֆոնին, ինչը չնկատելն ուղղակի հնարավոր չէ: Շատերն այս առիթով բացատրում են, որ քաղաքական ուժերը սեփական խնդիրները լուծելով, զանգվածների խնդիրների լուծումը հերթական անգամ առանց լուծելու են թողնելու, ինչն էլ նվազեցրել է ոչ միայն նրանց, այլեւ նրանց մասին ամեն օր գրող մամուլի հանդեպ հետաքրքրությունը: Մի խոսքով՝ ՀԱԿ-ի տրանսֆորմացիան, ինչպես տերմինավորեց ոչ անհայտ մի «հեղափոխական», արդեն իսկ բացասաբար է ազդել ՀԱԿ-ի համակիրների վրա, որոնք հիմա թերթերից են հրաժարվում, վաղն էլ «Ազատության» հրապարակ ու ընտրություններից չեն գա:

Ասենք, որ մեր վերլուծաբանների հատվածական ոգորումները՝ Հայաստանում տեղի ունեցող ամեն ինչ միայն ներքաղաքական հարթության դերակատարներով ու միայն նրանց խաղացած շախմատով բացատրելու, արդեն հնացած կամ նվազագույնը՝ միակողմանի են, քանի որ ընդամենը եթե մի փոքր հեռավորությունից կամ բարձրությունից նայենք Հայաստանի քաղաքական զարգացումների մակետին, այդ բացատրությունները շատ թերի կթվան եւ շղթայի տարբեր մասերում գտնվող առանձին օղակների առկայծումների երեւույթը կունենան, քանի որ մոտիկ տարածությունից ողջ շղթան նկատելը շատ դժվար է, հատկապես կարճատեսության պարագայում: Մինչդեռ պատմության, աշխարհագրության եւ աշխարհաքաղաքականության համադրումն այլ հայացք ու այլ մոտիվացիա կգտնի կատարվողում:

**Մեր տարածաշրջանի գլխավոր**

# Խոշոր հարկատուների վճարած հարկերն ավելացել են

**ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**

**Պետեկամուտների կոմիտեի կայքում տեղադրվել է 2011-ի առաջին եռամսյակի Հայաստանի 1000 խոշոր հարկատուների ցանկը: Տարիների ընդմիջումից հետո, վերստին Հայաստանի ամենախոշոր հարկատուն է դարձել «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատը»՝ 7,45 մլրդ դրամ վճարած հարկերով: Պղնձարդյունաբերության խոշորագույն ընկերությունն անցյալ տարվա առաջին եռամսյակում վճարել էր 1,2 մլրդ դրամ եւ 11-րդ տեղում էր: Այսինքն, ակնհայտ է նրա վճարած հարկերի կտրուկ ավելացումը: Երկրորդ տեղում «Հայռուսգազարդն» է՝ 7,35 մլրդ դրամով: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ վճարած հարկերի աճը կազմել է ավելի քան 2 մլրդ դրամ: Երրորդ տեղում «Ալեքս Գրիգ» ընկերությունն է՝ 4,57 մլրդ դրամ ցուցանիշով, ինչը շատ փոքր՝ ընդամենը 170 մլն դրամով է գերազանցում նախորդ տարվա առաջին եռամսյակի ցուցանիշը: Պատգամավոր Սամվել Ալեքսանյանին պատկանող այս ընկերությունը շարունակում է չնչին վճարումներ կատարել ուղղակի հարկատեսակների (շահութահարկ, եկամտահարկ) մասով՝ ընդամենը 130 մլն դրամ: Չորրորդը «Արմենթելն» է 3,14 մլրդ դրամ ցուցանիշով, ինչը մոտ 250 մլն դրամով պակաս է անցյալ տարվա առաջին եռամսյակի համեմատ: Հինգերորդ տեղում է հեռահաղորդակցության ոլորտի առաջատար «Ղ-Տելեկոմ» («Վիվասել-ՄՏՍ») ընկերությու-**

### ԱՅԺ

# Նախագահը մեկնել է Ստեփանակերտ

**Երեկ Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը մեկնել է Ստեփանակերտ՝ մասնակցելու եռատոնին (Հաղթանակի, ԼՂՀ պաշտպանության բանակի եւ Շուշիի ազատագրման) նվիրված միջոցառումներին: ԼՂՀ մայրաքաղաքի օդանավակայանում Սերժ Սարգսյանին դիմավորել են Արցախի Հանրապետության նախագահ Բակո Սահակյանը, պաշտոնատար այլ անձինք: Ինչպես տեղեկանում ենք Արցախի նախագահի պաշտոնական կայքից, «Սերժ Սարգսյանն ու Բակո Սահակյանը այցելել են Ստեփանակերտի օդանավակայանի համալիր եւ ծանոթացել իրականացվող աշխատանքների ընթացքին»:**

**Հ. Ա.**




# Յովանովիչը հեռանում է Հայաստանից



Հունիսին Երեւանում ԱՄՆ դեսպան Մարի Յովանովիչը, մեր երկրում դիվանագիտական եռամյա առաքելությունն ավարտելով, կհեռանա Հայաստանից: Այս տեղեկությունը երեկ հաստատեց Երեւանում ԱՄՆ դեսպանատան հասարակայնության հետ կապերի բաժինը: Հունիսին Յովանովիչը կվերադառնա Վաշինգտոն, որտեղ աշխատանքի կանցնի պետքարտուղարությունում՝ որպես Հյուսիսային եւ Կենտրոնական Եվրոպայի հարցերով պետքարտուղարի փոխտեղակալ:

# Բաց նամակ Հայաստանի Հանրապետության նախագահ Սերժ Սարգսյանին

***Ստորեւ հրապարակում ենք հայտնի գիտնական, կրթության գործի հրաշալի կազմակերպիչ, ակադեմիկոս Սերգեյ Համբարձումյանի բաց նամակը՝ ուղղված ՀՀ նախագահին, մարտի 1-ի գործով բանտարկյալներին ազատ արձակելու վերաբերյալ: Վստահ ենք, որ ակադեմիկոսի այդ նախաձեռնությանը պետք է ուզեին միանալ մեր մտավորականներից շատ շատերը:***

**Մեծարգո պարոն Նախագահ**

**Ելնելով իմ կյանքի երկարամյա փորձից, հորդորում եմ Ձեզ՝ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի բարձր լիազորություններով, կարգադրել հանրապետության համապատասխան ծառայություններին՝ անհապաղ ազատ արձակել հանրապետության կալանավայրերում գտնվող մարտի 1-ին առնչվող բոլոր բանտարկյալներին, անկախ նրանց համար դատարանի կողմից սահմանված պատժաչափից:**

**Համոզված եմ, որ Ձեր՝ այս բարձր քաղաքական նշանակություն ունեցող ձեռնարկումը գոհունակությամբ կընդունվի հանրապետության ողջամիտ հանրության կողմից եւ կբարձրացնի հանրապետության վարկանիշը քաղաքակիրթ աշխարհում:**

**Հարգանքներով՝** ՍԵՐԳԵՅ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

# Տարածաշրջանի քաղաքական զարգացումներին Թուրքիայի միջամտությունն ուղղորդվում է Վաշինգտոնից

## *Նրա դերը սահմանափակված է ԱՄՆ-ի տարածաշրջանային քաղաքականության շարունակականությունն ապահովելու առաջադրանքով*

**ՀԱԿՈԲ ՉԱՔՐՅԱՆ**

Երբ վարչապետ Ռեջեփ Թայիփ Էրդողանը հակաիսրայելական ելույթներ էր ունենում եւ իսլամական աշխարհում աճում էր նրա ժողովրդականությունը, «**Ազգի**» էջերում գրել էինք, որ այդ ելույթները ոչ այնքան պայմանավորված են թուրք-իսրայելական հակասություններով, որքան հետապնդում են Մերձավոր եւ Միջին Արեւելքում Իրանի հարաճուն ազդեցությունը հակակշռելու, դրանով էլ Անկարայի համար տարածաշրջանում առանցքային դերակատարություն ապահովելու նպատակ, որպեսզի Թուրքիան ձեռք բերի տարածաշրջանային գերտերության հնարավորություն:

«ՎիկիԼիքսի» այսպես կոչված բացահայտումները, վարկաբեկելով գլխավորապես տարածաշրջանի երկրների ղեկավարներին, ստեղծեցին Թունիսում ծայր առած հակակառավարական խռովությունը Հյուսիսային Աֆրիկայում եւ տարածաշրջանի երկրներում ծավալելու անհրաժեշտ բոլոր նախադրյալները: Խռովություններին իսկույն արձագանքեց ԱՄՆ-ի գլխավորությամբ Արեւմուտքը, հանդես գալով ընդդիմության պաշտպանի դերում:

Իրականում խնդիրը, ինչ խոսք, ընդդիմություն կոչվող ցուցարարները չէին, այլ տարածաշրջանը Վաշինգտոնի հայեցողությամբ վերակառուցելն ու վերակառուցման պայմաններում ԱՄՆ-ի տարածաշրջանային քաղաքականության շարունակականությունն ապահովելը: Թերեւս դա է պատճառը, որ հակակառավարական ցույցերը համաժողովրդական շարժման բնույթ չստացած, քաղաքացիական պատերազմի թատերաբեմ են դառնում այն երկրները, որոնք որպես սպառնալիք են դիտարկվում ամերիկյան քաղաքականությանը:

Ակնհայտ է, որ ցուցարարների հետ բախումները Արեւմուտքին տալիս են իշխանություն-ընդդիմություն պայքարին միջամտելու հնարավորություն: Մի դեպքում միջամտությունը ենթադրվում է պաշտոնից հրաժարվելու պահանջ ներկայացնել տվյալ երկրի ղեկավարին, այսինքն՝ քաղաքական ճնշում գործադրել նրա վրա, ինչպես Եգիպտոսում էր, իսկ մյուս՝ որպես պաշտոնանկ անելու միջոց դիմել ռազմական գործողություններին, ինչպես Լիբիայում:

Միջամտության հնարավորությունից դերակատարության հավակնությունները հիմնավորելու նկրտումներով օգտվում է նաեւ Թուրքիան: Քանի որ Թուրքիայի ղեկավարները դա որպես կանոն անում են ԱՄՆ-ի նախագահից հետո՝ կրկնելով վերջինի հորդորները, ուստի թուրքական միջամտություններն անցնում են ապարդյուն: Օրինակ, վարչապետ Էրդողանը «ժողովրդի ձայնին ականջ դնելու եւ պաշտոնից հրաժարվելու» պահանջով Հոսնի Մուբարաքին էր դիմել Բարաք Օբամայից հետո, ընդ որում՝ այդ նույն ոճով, իսկ Թուրքիայում Եգիպտոսի դեսպանը կտրականապես հակադրվել է նրան, ընդգծելով, որ Թուրքիան չի կարող մոդել հանդիսանալ Եգիպտոսի համար: «**Ազգը**» ժամանակին արձագանքել էր Թուրքիայում Եգիպտոսի դեսպանի հայտարարությանը:

*Տես էջ 5*

# Ինքնությունը կորցրած հայերի պատմությունը՝ թոռների շուրթերով

Ալի, Դենիզ, Էլիֆ, Հալիդեյ, Նազի, Սալիհ, Մելեք...

Նրանք 1915-1923 թթ. Հայոց ցեղասպանությանն ապրած ու բռնի ուժով ինքնությունը կորցրած հայերի թոռներն են, որ այսօր ապրում են Թուրքիայում: Ինքնությունը կորցրած հայերի հիշողություններն արդեն թոռների շուրթերով գրի են առել թուրք մտավորականներ **Ֆեթհիյե Չեթինն** ու **Այշե Գյուլ Ալթընայը**:

«Թոռները» հեշտ ընթերցվող գիրք չէ: Պատմությունները, որ պետք է կարդաք, դյուրին չէր ոչ պատմել, ոչ լսել, ոչ էլ գրի առնել», հավաստիացնում են հեղինակները:

«Երբ իմացա մեծ մորս՝ Հրանուշի պատմությունը, որ նա ինքնությունը կորցրած հայ է, ինձ հետաքրքրեց, թե քանի՞ նման պատմություն կա, քանի՞ ինքնությունը կորցրած կա, որ հանուն գոյատեւման վախեցել է ասել, որ հայ է: Իմ այս հարցին ոչ ոք չպատասխանեց», «Արեւմտահայոց հարցերի ուսումնասիրության կենտրոնում» երեկ գրքի հայերեն տարբերակի շնորհանդեսի ժամանակ ասաց Ֆեթհիյե Չեթինը:

Նա համոզված է՝ նման գրքեր պետք է շատ տպագրվեն, որպեսզի 1915-ի մասին խոսվի: «Նման գրքերը մտերմացնում են մարդկանց: Չէ՞ որ սա համամարդկային ցավ ու վիշտ է, իսկ ցավն ու կարեկցանքը միշտ էլ մարդկանց մտերմացնում են»:

Ինքնությունը կորցրած հայերի մասին Չեթինը 9 գիրք է հրատարակել: Նա վստահեցնում է, որ նման փոքրիկ պատմությունները կարող են մարդկանց մոտեցնել, դարձնել վշտակից ու ցավակից:



ՖՈՏՈԼՈՒՐ

Չեթինը պատմում է, որ «Մեծ մայրս» գրքի հրապարակումից հետո, Թուրքիայում ապրող բազմաթիվ անձինք դիմել են իրեն՝ ասելով, որ իրենք էլ հայերի թոռներ են, եւ ուզում են իմանալ նախնիների պատմությունն ու պատմել իրենց լաճերը:

«Իսլամացած հայերի մասին շատ բան չգիտենք: Նրանց մասին փորձում են չխոսել ոչ միայն Թուրքիայում, այլեւ ընդհանրապես ամբողջ աշխարհում: Սակայն նրանք կան ու ապրում են մեր կողքին: Նրանք այսօր էլ ապրում են Թուրքիայում՝ զգուշավորության մթնոլորտում», ասում է Այշե Գյուլ Ալթընայն ու հավաստիացնում, որ նման գրքերը չափազանց կարեւոր են հատկապես Թուրքիայի համար՝ պատմությանն առերեսվելու համար:

Հեղինակները գրքում բարձրաձայնում են կարեւորագույն հարցեր, թե ինչու տատիկների ու պապիկների հայ լինելու մասին 100 տարի անց լսելն այդքան դաժան եւ ցավոտ է թոռների համար:

Այշե Գյուլ Ալթընայը համոզված է, որ ցավի եւ լռության մասին խոսելը կարող է օգնել, որպեսզի մարդկությունն ուրիշ ցավերն ու լռությունը նկատի, խոսի: Որպեսզի նպաստի դեռ չիրագործված ցավերի ու լռությունների կասեցմանը:

«Սա մի գիրք է, որով ցանկանում ենք, որ մեզ ներեք, որ մենք ինքնությունը կորցրած հայերի մասին երկար ժամանակ չենք խոսել: Մենք ձեր ցավի մասին շատ ուշ լսեցինք, բայց հիմա արձագանքում ենք», եզրափակում է Չեթինը:

Այս գրքի հերոսները, մեզ հրավիրում են ծանոթանալու իրենց մեզ հետ ու հիշեցնում, որ խաղաղ ապագայի չենք հասնի, մինչեւ ստերից եւ իրական վախից փրկվելով՝ անցյալի հետ չառերեսվենք:

Հ. Հ.

# Ո՞վ կդառնա նոր արմատական ընդդիմություն

*1-ին էջից*

**Մեր տարածաշրջանի գլխավոր խաղացողների առումով երկու հանգամանք այս պահին ազդում են մնացած խաղացողների հետ կատարվողի վրա. առաջին՝ գլխավոր խաղացողները զբաղված են Մերձավոր Արեւելքով ու այնտեղ իրենց պատառին տեր կանգնելով, եւ երկրորդ՝ Ռուսաստանում, Թուրքիայում, ԱՄՆ-ում, Ֆրանսիայում եկող տարի համապետական նշանակության ընտրություններ են, այս խաղացողների պահվածքն իրենց երկրների ներսում եւ արտաքին քաղաքական ոլորտներում նախընտրական է, ինչով պայմանավորված՝ նրանք իրերի ներկա դրությունն (եթե կուզեք՝ ստատուս քվոն) առանձնապես չեն ուզենա փոխել աշխարհի նոր մի հատվածում, դրա համար ոչ ժամանակ , ոչ էլ հավես ունեն: Բացի դրանից՝ Մերձավոր Արեւելքում աշխարհի վերաբաժանման փորձերը նրանց ժամանակավորապես կտրել են բոլոր մյուս խնդիրներում գործուն լինելուց, ահա եւ Հայաստանում եւս մի փոքրիկ, մի կես տարվա ժամանակ ենք ստացել ` կարգի գցելու մեր տունը: Այս իմաստով՝ մերոնց թվում է միայն, որ երկու հոգով ներքաղաքական դաշտում շախմատ են խաղում, իրականում, շախմատի տախտակի վրա թենիսի զուգա, ես կասեի, եռախաղ է՝ ամեն կողմից թաքնված մեծ խաղացողների կիսահարվածներով: Ուղղակի մեծ խաղացողները մի քիչ գլուխ են պահում՝ իրենց գործերով զբաղված, մերոնք էլ ձեւ են անում, որ ինտելեկտուալ խաղով՝ շախմատով են զբաղված: Զուգախաղացողները կակտիվանան՝ իրենց սեփական երկրներում եւ Մերձավոր Արեւելքում խնդիրները լուծելուց հետո: Այնպես որ շախմատիստներից մեկին՝ ՀԱԿ-ն բզբզող տիկին Յովանովիչն իր մախսիմում ծրագիրը՝ ՀԱԿ-իշխանություն երկխոսությունը՝ առանց այս պահին ոչ հարմար սրացումների, կարող է կատարված համարել: Համմարբերգը կարող է հանգիստ շունչ քաշել, իրեն ոչ ոք չի դատափետի մայիսի 9-ին սպասվելիք զեկույցում «քաղբանտարկյալ» եզրույթը չօգտագործելու եւ առհասարակ՝ իշխանությունների հանդեպ հանդուրժողական ձեւակերպումներով խոսելու համար, իսկ իշխանությունն էլ թաքուն կարող է տոնել իր «իմաստուն» պահվածքի հաղթանակը, բացահայտ ասելով՝ ինչ հարմար է, քանզի լուծեց անլուծելի թվացող՝ դիմակայության խնդիրը: Նախ՝ տեւաբար դիմանալով ընդդիմության ճնշումներին եւ թուլացնելով նրան, այժմ էլ արդեն՝ իշխանությունից մաս հանելու խոստումով սանձելով արդեն թուլացածին, իր համար թողնելով միայն ներկոալիցիոն կնճիռների հարթումը: Վերադառնալով վերջին խնդրին՝ հեռվից գանք: Մի քանի անգամ ասել ենք, եւ նորից կրկնում ենք՝ Հայաստանի երեք նախագահները, լինելով երկրի ղեկի մոտ, այնքան տեղական եւ միջազգային գաղտնիքների են տիրապետում, որ դրանց օգտագործումը տեղական եւ միջազգային նշանակությամբ, տարբեր ժամանակներում նրանցից տարբեր անձերի վրա «ստավկա» անելով, տեխնիկայի հարց է: Իսկ թե ինչպես եւ ի՞նչ ճանապարհով եւ այս պահին ո՞ւմ վրա «ստավկա» կանեն ներսում ու դրսում՝ այ այս մի խնդիրն էլ կախված կլինի միշտ մեր հասարակությունից, նրա՝ խաբվելու կամ չխաբվելու պատրաստակամությունից կամ կարողությունից, ոնց կուզեք հասկացեք: Ներկա**



**դեպքում պարզ է, որ մեր հասարակության՝ փոփոխությունների կարոտ զանգվածը սխալ խաղադրույք է արել: Բայց դրանում պետք է ինքն իրեն մեղադրի եւ ոչ մեկ ուրիշի, քանի որ երբ մարդ մի անգամ է խաբվում, ասում են՝ պատահեց, երկրորդ եւ երրորդ անգամ խաբվելու պարագայում շատ հայտնի բնորոշումներ կան, որն ուզում եք՝ օգտագործեք:**

**Իսկ թե կոալիցիան ընտրությունների գնալու է միասնակա՞ն, թե՞ առանձին ցուցակներով, ո՞վ է կազմելու նրա ցուցակները (պարզ չէ՞, թե ո՞վ- Մ.Խ.), արդեն մանր-մունր հարցեր են՝ Արամ Մանուկյանի ասած երկիր փրկելու համեմատ: Ավելի շատ պետք է մտածել այն մասին, թե ո՞վ է դառնալու արմատական ընդդիմության իրավահաջորդը, ո՞ւմ են մղում այդ դաշտ: Արդյո՞ք այդ ռոտացիան տեղի կունենա 2012 թվականին խորհրդարան չանցած ուժերի հաշվին, որովհետեւ նորմալ ընտրությունների դեպքում թերեւս կարելի կլիներ արմատական ընդդիմություն պատկերացնել խորհրդարանում: Սակայն Հայաստանում, անկախ նրանից Վենետիկի փորձագետների եզրակացությամբ ինչ սիրուն ընտրական օրենսգիրք կունենանք կամ չենք ունենա, հազիվ թե խորհրդարանում արմատական ընդդիմադիր հայացքներ ունեցողներ լինեն: ՀԱԿ-ն խորհրդարան անցնելով՝ կդառնա կառուցողակա՞ն ընդդիմություն: Մինչդեռ այսօրվանից պետք է մտածել իշխանությանը հավասարակշռող ընդդիմություն ունենալու մասին, այլապես ՀԱԿ-ն արդեն տեղաշարժվում է դեպի կենտրոն, իսկ նրա տեղը բաց է մնում՝ Քոչարյանի ականջը կանչի: Մեր կարծիքով այդ բացը կլրանա այս տարվա աշնան ամիսներին, ինչպես, ի դեպ, ներքաղաքական շատ խնդիրների լուծումը կհետաձգվի արդեն հենց այդ ամիսներին, ընտրական տարին սկսելուց առաջ մի վերջին անգամ գույքագրելով մեր քաղաքական դաշտը:**

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

# Դիֆտերիայի ու փայտացման հարուցիչները դեռ չեն վերացել

**«26, 36, 46 եւ 56 տարեկան քաղաքացիները պոլիկլինիկայում կարող են անվճար պատվաստվել դիֆտերիայի ու փայտացման դեմ»: Օրերս «Վիվասել-ՄՏՍ»-ի բաժանորդներն այսպիսի հաղորդագրություն ստացան: Առողջապահության նախարարությունն ու «Վիվասել-ՄՏՍ» ընկերությունն արդեն 3 տարի բնակչությանը պատվաստումների մասին իրազեկելու այսպիսի տարբերակ են ընտրել: Դիֆտերիան ու փայտացումը վարակիչ հիվանդություններ են: Թեեւ 2000 թվականից առ այսօր հանրապետությունում դիֆտերիայի դեպք չի արձանագրվել, իսկ փայտացման դեպքերն էլ հասուկենտ են, այնուամենայնիվ մասնագետները կարծում են, որ պահովության համար պատվաստվելն անհրաժեշտ է, քանի որ աշխարհում դիֆտերիայի հարուցիչը դեռ չի վերացել:**

**Պետական հիգիենիկ եւ հակահամաճարակային տեսչության վարակիչ ու ոչ վարակիչ հիվանդությունների համաճարակաբանության գլխավոր մասնագետ Գայանե Սահակյանն ասում է. «Հաշվի առնելով Հայաստանի հետ կապ ունեցող երկրների, օրինակ՝ Ռուսաստանի, Թուրքիայի, Իրանի համաճարակային իրավիճակը՝ դիֆտերիայի ու փայտացման դեմ պատվաստումները մեր պլանային օրացույցից չենք հանում: Այդ երկրներում դիֆտերիան միշտ էլ արձանագրվում է բռնկումների ձեւով: Որպեսզի մեզ մոտ էլ հանկարծ նման պատկեր չլինի, կանխարգելիչ մեթոդներն, այսինքն՝ պատվաստումներն անհրաժեշտ են»: Գայանե Սահակյանը հիշում է, որ 1994-95 թվականներին Հայաստանում դիֆտերիայի բռնկում եղավ եւ մահվան ավելի քան 30 դեպք գրանցվեց. «Դրանից հետո չափահաս բնակչության շրջանում, անկախ փաստից՝ հանրապետությունում կա դիֆտերիա, թե ոչ, պատվաստումներ մշտապես անում ենք»:**

**Մի քանի օր առաջ, երբ ստացանք առողջապահության նախարարության հաղորդագրությունը, շատերիս մեջ հարց առաջացավ՝ եթե մարդը 26, 36, 46 ու 56 տարեկան չէ, ուրեմն չի՞ կարող պատվաստվել, ինչպե՞ս պետք է վարվեն մյուս քաղաքացիները: Սրա առնչությամբ Գայանե Սահակյանը բացատրում է, որ վերոնշյալ տարիքներն ընտրվել են, որպեսզի հնարավոր լինի ժամանակացույց կազմել: Նրա փոխանցմամբ՝ երեխան իր վերջին պատվաստումը ստանում է 6 տարեկանում, դրանից հետո 10 տարիների ընթացքում երեխայի իմունիտետը կարողանում է պաշտպանել նրան դիֆտերիայից ու փայտացումից: Հաջորդ պատվաստումը կատարվում է 16 տարեկանում, ապա՝ 26-ում, 36-ում եւ այդպես՝ 10 տարին մեկ անգամ: Եթե մարդը 10 տարին մեկ անգամ պատվաստվում է, ուրեմն նա դիֆտերիայից ու փայտացումից պաշտպանված է:**

*Տես էջ 8*

# Խոշոր հարկատուների վճարած հարկերն ավելացել են

*1-ին էջից*

Վեցերորդ տեղում վառելիք ներմուծող «Սիթի պետրոլ գրուպն» է՝ 2,1 մլրդ դրամ վճարած հարկերով՝ ինչը մոտ 100 մլն դրամով է ավելի անցյալ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ: Յոթերորդ տեղում է «Հայաստանի էլեկտրական ցանցերը»՝ 2 մլրդ դրամ ցուցանիշով, որը նույնպես 200 մլն դրամով ավելի է 2010-ի նույն ժամանակահատվածից: Ութերորդը ծխախոտի արտադրության «Գրանդ Տոբակո» ընկերությունն է 1,99 մլրդ դրամ վճարած հարկերով: «Գրանդ Տոբակոն» ավելի քան 3 անգամ ավելի հարկեր է վճարել նախորդ տարվա առաջին եռամսյակի համեմատ: Իններորդ խոշոր հարկատուն վառելիք ներկրող «Ֆլեշ» ընկերությունն է 1,9 մլրդ դրամով, ինչը մոտ 300 մլն դրամով զիջում է նախորդ տարվա այս ժամանակահատվածի ցուցանիշին: Լավագույն տասնյակը եզրափակում է ծխախոտի արտադրության մյուս ընկերությունը «Ինտերնեյշնլ Մասիս Տաբակը» 1,3 մլրդ դրամ վճարած հարկերով, որը եւս 100 մլն դրամով ցածր է անցյալ տարվա առաջին եռամսյակի վճարած հարկերից: (Անշուշտ, Գրանդ Հոլդինգին պատկանող այս եւ մյուս ընկերությունների համախառն հարկավճարումների գումարը փոխում է աղյուսակի պատկերը հօգուտ Վարդանյան ընտանիքի):

Բջջային կապի մյուս օպերատոր «Օրանժ Արմենիան» անցած եռամսյակում վճարել է 1,28 մլրդ դրամ եւ 11-րդ տեղում է: 1 մլրդ դրամը գերազանցող հարկեր են վճարել եւս երկու ընկերություն՝ «Արմենիա միջազգային օդանավակայանները»՝ 1,27 մլրդ դրամ՝ 12-րդ տեղ եւ ծխախոտ ներմուծող «Վիդիս դիսթրիբյուշնը»՝ 1 մլրդ դրամ՝ 13-րդ տեղ:

1000 խոշոր հարկատուների այս տարվա հունվար-մարտ ամիսներին վճարած գումարները կազմել են ավելի քան 106 մլրդ դրամ, ինչը մոտ 9 տոկոսով գերազանցում է նախորդ տարվա առաջին եռամսյակի ցուցանիշը: Խոշոր հարկատուների ուղղակի հարկերի վճարումներն ավելացել են 18 տոկոսով՝ կազմելով 26 մլրդ դրամ:

# ՀՀ պետական բուհերը խոշոր հարկատուներ են

**ՀՀ պետական եկամուտների կոմիտեն հրապարակել է 2011 ֆինանսական տարվա առաջին հազար խոշոր հարկ վճարողների ցանկը՝ համաձայն վճարված հարկերի եւ տուրքերի մեծության: Ցանկում ընդգրկված են նաեւ ՀՀ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունները, որոնք առաջին եռամսյակում, բարեխիղճ կատարելով պետության նկատմամբ իրենց հարկային պարտավորությունները, հայտնվել են այդ ցուցակում: Առաջին հազարում են 14 բուհ եւ կրթական ծառայություն մատուցող կազմակերպություն, որոնց մեջ առաջատարը Երեւանի պետական համալսարանն է (106-րդ տեղ) 155 մլն վճարման ցուցանիշով: Հաջորդում են Մ. Հերացու անվան բժշկական պետական համալսարանը (116-րդ տեղ) եւ Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանը (220-րդ տեղ) համապատասխանաբար 146 մլն եւ 77 մլն ցուցանիշներով: Ընդհանուր առմամբ ցանկում ընդգրկված կրթական կազմակերպություններն առաջին եռամսյակում պետական բյուջե են մուծել ավելի քան 741 մլն դրամ:**

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան Ի տարի

Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
**www.azg.am**

Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635

Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221

Հաշվապահութիւն (գովազդ) / հեռ 582960

Լրագրողների սենեակ / հեռ 581841

Համակարգչ. ծառայութիւն / հեռ 582483

***Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն*** / հեռ 529353

Համակարգչային շարուածքը
«Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:

“AZG” Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

# «Տղամարդիկ հերթ էին կանգնած Շուշին ազատագրելու համար»

19 տարի առաջ, այս օրերին, հայկական զորքերը ազատագրեցին Շուշին: Այսօր, սակայն, դեռեւս ամրագրված չէ այդ հաղթանակը՝ ձեռք բերված բազմաթիվ հայորդիների կյանքի գնով: Շուշիի առանձնակի գումարտակի հրամանատար **Ժիրայր Սեֆիլյանը** երեկ հրավիրած ասուլիսում հիշեցրեց, որ այն օրերին տղամարդիկ «հերթ էին կանգնած Շուշին ազատագրելու համար». «Ամբողջ ժողովուրդն էր համախմբված մեկ ազգային ծրագրի շուրջը: Ես համոզված եմ, որ մեր հաջողության գրավականն հենց դա էր», ընդգծեց Սեֆիլյանը: Մեր օրերում արդեն «Սարդարապատ» շարժման նախաձեռնող խմբի անդամ Սեֆիլյանը կրկին բարձր օրակարգ է առաջ բերում. «Հայության ներուժի օգտագործմամբ պետք է ստեղծենք պետություն՝ ազգային պետություն: Այժմյան մեր պետությունն ընդամենը պետության իմիտացիա է, որտեղ բնակչության 80 տոկոսից ավելին օրվա հացի խնդիր է լուծում: Նման պայմաններում Շուշիի ազատագրման տոնը հիշեցնում է խրախճանք ժանտախտի մեջ», նշում է Սեֆիլյանը, հորդորելով շատ չմտահոգվել՝ շեշտելով. «Սա չի նշանակում, թե մեզ չի հաջողվելու ազգային պետություն ստեղծել: Ինչպես անհավանական էր թվում Շուշիի ազատագրումից հետո նաեւ Աղդամի ազատագրումը, այնպես էլ այսօր անհավանական է թվում ազգային պետության ստեղծումը»: Շուշիի ազատագրմանը մասնակից Սեֆիլյանն այսօր մտահոգություն է հայտնում, որ ազատագրված տարածքները չեն բնակեցվում, որ այսօրվա Շուշին հիշեցնում է «քաղաք-ուրվական», որ «դատարկվում է ամբողջ երկիրը՝ Ախուրյանից մինչեւ Մեղրի»: «Այսօր ինձ նմանների համար տոն չէ, քանի որ մենք չկարողացանք ստեղծել մի երկիր, որն արժանի կլիներ մեր տարած հաղթանակին», ասաց Սեֆիլյանը՝ ավելացնելով. «Ազատամարտիկ Սասուն Միքայելյանը մինչ այսօր անազատության մեջ է»:

Անդրադառնալով ներքաղաքական վերջին զարգացումներին, մասնավորապես իշխանություն-ընդդիմություն «բաց երկխոսությանը», Սեֆիլյանը համոզմունք հայտնեց, որ իշխանություն-ընդդիմություն շփումը աշխատում է միայն ի վնաս ընդդիմության. «Քանի որ ժողովրդի աչքում վարկաբեկված այսօրվա իշխանության հետ երկխոսող ընդդիմությունը նույնպես վարկաբեկվում է», ասաց Սեֆիլյանը՝ ընդգծելով, որ «Սերժ Սարգսյանի՝ ընդդիմության հետ երկխոսության գնալու այս քայլը հենց այդ հաշվարկով է արված»: Բանախոսը նշեց, որ «Սարդարապատ» նախաձեռնությունը բազմիցս է հորդորել ՀԱԿ-ին՝ չգնալ այդ քայլին, սակայն ապարդյուն. «Լեւոն Տեր-Պետրոսյանն, իր էությամբ, հակահեղափոխական գործիչ է, բացի դրանից՝ ՀԱԿ-ի ղեկավարության շրջանում ես վերջին ժամանակներում որոշակի հոգնածություն էի նկատում, հոգնածություն՝ շարունակել մնալ քաղաքական հալածյալի կարգավիճակում: Կարծում եմ՝ այս ամենն էականորեն անդրադարձ ունեցել է ՀԱԿ-ի՝ իշխանության հետ բաց երկխոսության գնալու այս քայլում: Այժմ էլ մենք նոր հորդորներ անելու ցանկություն չունենք», ասաց Սեֆիլյանը՝ նշելով, որ իրենք «կտրուկ փոփոխություններ են ուզում, եւ միայն այդ ճանապարհը երկրի համար կապահովի թռիչքային զարգացում»:

Եթե իշխանության ճամբարի հաշվարկի իմաստը հասկանալի է, ապա ընդդիմությանն այս քայլից ի՞նչ է շահում. ըստ Սեֆիլյանի, առաջագա խորհրդարանի 20-25 տոկոսը: Ի դեպ, Սեֆիլյանը համոզված է, որ Հայաստանում արդահերթ ընտրություններ չեն լինի: Փաստորեն 2008-ի նախագահական ընտրություններից հետո տեղի ունեցած ՀԱԿ-ի հանրահավաքները ընդամենը նպատակ ունեին թեկուզ չնչին, բայց տեղ ապահովել Կոնգրեսին գալիք խորհրդարանում: Փաստորեն ՀԱԿ-ի հանրահավաքներին մասնակցած մարդիկ ընդամենը միջոց էին, «ճանապարհ» դեպի «մեծ երկխոսությունը»... ոչ ավելին: Այս ամենը, ցավոք, իրականությունն է այսօրվա, մինչդեռ «երեկ» «տղամարդիկ հերթ էին կանգնում Շուշին ազատագրելու համար»: Եվ մի՞թե մարդիկ չեն հոգնել մշտապես «միջոց» կամ «ճանապարհ» լինելուց, եւ արդյո՞ք այդպես դիտարկվելը նաեւ չի նպաստում երկրի դատարկմանը՝ «Ախուրյանից մինչեւ Մեղրի»: Ի վերջո՝ ո՞վ կարող է վստահություն հայտնել, որ անհրաժեշտության դեպքում «տղամարդիկ էլի հերթ կկանգնեն»: Թերեւս միայն ղարաբաղյան պատերազմում ազգային համախմբումից ծնված հայորդիների սխրանքը, ինչի շնորհիվ էլ 19 տարի առաջ այս օրերին ազատագրվեց Շուշին, ինչն անշուշտ տոն է, անկախ՝ «ժանտախտի» գոյությունից:

ՀՈՎԻԿ ԱՖՅԱՆ




# Նշվեց մանկաբարձների միջազգային օրը

**Մանկաբարձների միջազգային օրվան նվիրված հավաքում ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամի գործադիր տնօրեն դոկտոր Բաբատունդե Օսոտիմեհին ներկայացրեց աշխարհում ներկա իրավիճակը եւ տեղեկացրեց, որ որոշ ամենաաղքատ երկրներում բոլոր ծնունդների ընդամենը 13 տոկոսին է մանկաբարձ կամ մանկաբարձի հմտություններ ունեցող բուժաշխատող մասնակցում: Ամեն օր, համապատասխան բժշկական խնամքի բացակայության պատճառով, աշխարհում մահանում են 1000 կին եւ 5500 նորածին կյանքի առաջին շաբաթվա ընթացքում: Ներկայումս ողջ աշխարհում շուրջ 350.000 արհեստավարժ մանկաբարձների պակասը բերում է նրան, որ կանայք եւ նրանց նորածինները մահանում են այնպիսի բարդություններից, որոնք կարող էին հեշտությամբ կանխվել պատշաճ հմտությունների, սարքավորումների եւ օժանդակության պարագայում: Այս տարվա հունիս ամսին 20 գործընկերների հետ ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամը հրապարակելու է «Մանկաբարձներն աշխարհում» զեկույցը, որտեղ տեղ կգտնեն նաեւ մեր երկրի ցուցանիշները:**

**Հայաստանում ներկայումս գործում են 972 մանկաբարձ գինեկոլոգ: 2011 թ. հունվար-մարտ ամիսներին մինչեւ 1 տարեկան երեխաների մահացության ցուցանիշը կազմել է 12,8 տոկոս (1000 կենդանի ծնվածի հաշվով): Նույն ժամանակահատվածում մայրական մահացության գործակիցը կազմել է 9,8 (100.000 կենդանի ծնվածի հաշվով՝ 1 դեպք):**

ՄԱՐԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ

# Կուսումնասիրվի Թուրքիայից բանջարեղեն ներմուծողների գործունեությունը

*Տեղական արտադրողների դժգոհությունների հիման վրա*

Ինչպես տեղեկացանք տնտեսական մրցակցության պաշտպանության հանձնաժողովից, հանձնաժողովը որոշել է ուսումնասիրություն սկսել Թուրքիայից բանջարեղեն ներմուծող ընկերությունների գործունեության նկատմամբ: Մանրամասն կուսումնասիրվեն թե՛ տեղական արտադրողների, թե՛ ներմուծողների եւ թե՛ ՊԵԿ-ի ներկայացրած տեղեկատվությունները: Այդ որոշումը հանձնաժողովը կայացրել է՝ նկատի ունենալով Հայաստանում ջերմոցային տնտեսությամբ զբաղվող ձեռներեցների դժգոհությունները Թուրքիայից ներկրվող բանջարեղենների, մասնավորապես լոլիկի (պոմիդորի) ներմուծման առնչությամբ: Կազմակերպվող ցույցերի ընթացքում նրանք նշում են, որ ներկրողի եւ տեղական արտադրողի միջեւ գոյություն ունեն անհավասար մրցակցային պայմաններ: Ըստ նրանց պարզաբանումների, ինչպես նաեւ տարբեր լրատվամիջոցների հրապարակումների, Թուրքիայից ներկրվող բանջարեղենը շուկայում իրացվում է անհամեմատ ցածր գնով, ինչն էլ խոչընդոտում է տեղական արտադրողի գործունեությանը:

Ա. Մ.



# Մայիսի 9-ին ընդառաջ՝ 2 հուշագիր ու մի ցուցահանդես

**Երեւանի ճարտարապետության ու շինարարության պետական համալսարանում երեկ 2 հուշագիր ստորագրվեց: Դրանցից մեկը ստորագրվեց համալսարանի արհմիության, ուսխորհրդի ու «Արարատբանկի» միջեւ: Այս հուշագրի համաձայն, ազատագրական պայքարում զոհված ազատամարտիկների ու ծնողազուրկ երեխաների համար համալսարանում սննդից օգտվելը լինելու է անվճար:**

**Ճարտարապետության ու շինարարության համալսարանի ռեկտոր Հովհաննես Թոքմաջյանն ասաց. «Մենք ունենք արհմիություն, որին դասախոսներն փոխանցում ենք մեր աշխատավարձի որոշ մասը, եւ արհմիությունն ունենում է հավաքված գումար, ինչն էլ օգտագործում է տարբեր նպատակներով: Արհմիության հետ ունենք պայմանավորվածություն, որ այդ գումարի շուրջ 1/3-ն ուղղենք սննդի տրամադրելուն»:**

**Այս ծրագիրն իրականացնելու համար «Արարատբանկը» համալսարանում տեղադրելու է բանկոմատ, իսկ օգտվող ուսանողներին տրամադրելու է քարտեր, որոնց միջոցով ուսանողները կարող են ստանալ ամսական հատկացված գումարը:**

**Հովհաննես Թոքմաջյանի փոխանցմամբ՝ հնարավոր է, որ համալսարանը որպես 4-րդ կողմ հանդես գա ֆինանսական աջակցությամբ, եւ ծրագրում անապահով ընտանիքներից ընդգրկվեն ավելի շատ ուսանողներ: Այս տարվանից արդեն շուրջ 500 ուսանող կկարողանան օգտվել սննդի մասնակի փոխհատուցման քարտերից: Համալսարանականների փոխանցմամբ՝ անկախ Հայաստանի պատմության մեջ սա առաջին բուհն է, որ նման քայլ է անում:**

**Մյուս հուշագիրն էլ ստորագրվեց համալսարանի ուսխորհրդի ու «Ինժեներ-լիգա» ընկերության միջեւ: Հիմք ընդունելով ուսխորհրդի առաջարկը՝ ռեկտորատը համալսարանի պատմության մեջ առաջին անգամ որոշել է գրախանութի, պատճենահանման, բուֆետի գներն ու սննդի որակը վերահսկելու լիազորությունը վերապահել ուսխորհրդին: Երկրորդ հուշագիրը հենց սրան էր վերաբերում, իսկ «Ինժեներ-լիգա» ընկերությունը սպասարկող կազմակերպությունն է: Ըստ ռեկտորի՝ նման նախաձեռնությունը միեւնույն ժամանակ մեծացնում է ուսխորհրդի պատասխանատվությունն ու դերը:**

**Մայիսի 9-ին ու ճարտարապետության եւ շինարարության համալսարանի 90-ամյակին ընդառաջ երեկ համալսարանի Ջիմ Թորոսյանի անվան գծանկարի, գունանկարի ու քանդակի արվեստանոցում ցուցահանդես էր բացվել: Ճարտարապետ ու նկարիչ Ալբերտ Սոխիկյանը տեղեկացրեց, որ ներկացված նկարչական աշխատանքների հեղինակներն իրենց դասախոսներն ու ուսանողներն են:**

Ի. Պ.

# Կախակայվելու է Աբել քահանա Մանուկյանի քահանայագործությունը

**Գարեգին Բ Ամենայն հայոց կաթողիկոսի տնօրինությամբ մայիսի 10-ից կախակայվում է Աբել քահանա Մանուկյանի քահանայագործությունը դրսեւորած կարգազանց ընթացքի՝ Շվեյցարիայում հաստատված կանոնական թեմի իրողությունը մերժելու, նշանակված առաջնորդական տեղապահի եւ Ժնեւի Սուրբ Հակոբ եկեղեցու նորանշանակ հովվի հանգամանքը չճանաչելու եւ Մայր աթոռ ներկայանալու հայրապետական հրահանգները չկատարելու համար: Մայր աթոռից տեղեկացնում են, որ Աբել քահանային հրահանգվել է մեկշաբաթյա ժամկետում ներկայանալ Մայր աթոռ Սուրբ Էջմիածին, վանական խորհրդին: Տեղեկացնենք, որ կախակայման ընթացքում կարգազանց եկեղեցականին արգելվում է կատարել ծիսապաշտամունքային որեւէ արարողություն, հակառակ պարագայում կատարված արարողությունն անվավեր է:**

# «Յունիբանկ»-ը պրոմո-կետեր է բացել «Փայն», «Նիքս» եւ «Քոմփաս» համակարգչային տեխնիկայի խանութ-սրահներում

Ապրանքների ապառիկ վաճառքի վարկավորման պայմանների ներկայացման եւ տեղում հաճախորդներին անհրաժեշտ խորհրդատվություն մատուցելու նպատակով, «Յունիբանկ»-ը պրոմո-կետեր է բացել «Նիքս» (ք. Երեւան, Սարյան 6-7), «Փայն» (ք.Երեւան, Սարյան 12), եւ «Քոմփաս» (ք.Երեւան, Սայաթ Նովա պող. 15) համակարգչային տեխնիկայի խանութ-սրահներում: Պրոմո-կետերի աշխատակիցները հաճախորդներին կպարզաբանեն վարկավորման գործընթացը եւ կօգնեն վարկային հայտի լրացման, ինչպես նաեւ փաստաթղթերի ներկայացման գործում:

Հիշեցնենք, որ նշված խանութներից համակարգչային տեխնիկա գնելու համար «Յունիբանկ»-ի կողմից տրամադրվող վարկերի տարեկան տոկոսադրույքը կազմում է սկսած 18 տոկոսից, ժամկետը՝ 24 ամիս, կանխավճարը՝ 0 տոկոս: Վարկի տրամադրման համար անհրաժեշտ է ներկայացնել դիմում, անձնագիր, սոցիալական քարտ եւ տեղեկանք աշխատավայրից: Վարկի տրամադրման վերաբերյալ Բանկի որոշման մասին հաճախորդը կարող է տեղեկանալ հայտը ներկայացնելուց հետո առավելագույնը 40 րոպեի ընթացքում:

«Ինչպես գիտեք, Յունիբանկը ռազմավարության առաջնահերթ ուղղություն է ընդունել մանրածախ բիզնեսի զարգացումը: Իսկ դա, առաջին հերթին, ենթադրում է ֆիզիկական անձանց համալիր եւ որակյալ սպասարկման կազմակերպում: Այդ իսկ պատճառով, մենք, բացի մասնաճյուղային ցանցի շարունակական ընդլայնումից, ձեռնամուխ եղանք նաեւ պրոմո-կետերի բացմանը հենց առեւտրի կետերում: Մինչեւ տարեվերջ նախատեսում ենք շեշտակի ավելացնել նմանատիպ կետերի քանակը՝ ներգրավվելով այլ ոլորտներում եւս»,- նշեց «Յունիբանկ»-ի մանրածախ բիզնեսի գծով տնօրեն **Մեսրոպ Հակոբյանը**:

2010թ.-ի արդյունքներով «Յունիբանկ»-ի վարկային ներդրումների 26,7 մլրդ դրամը կամ 35,5 տոկոսը կազմել են ֆիզիկական անձանց տրամադրված վարկերը: Սպառողական վարկավորման ոլորտ ուղղված Բանկի ներդրումների ծավալը կազմել է 24 մլրդ դրամ, ինչը ՀՀ բանկային համակարգի լավագույն ցուցանիշն է: Հիշեցնենք, որ ներկա դրությամբ «Յունիբանկ»-ն ունի 35 մասնաճյուղ եւ ներկայացուցչություն Մոսկվայում:

# Հոյակապ տղերք զոհվեցին, բայց... պատերազմ էր

Արցախյան պատերազմի ժամանակ, ինչպես Հայաստանի բոլոր բնակավայրերը, այնպես էլ Շիրակի մարզի Արթիկի շրջանը շատ զոհեր է տվել՝ 41-ը ամբողջ շրջանից, որոնցից 18-ը՝ Արթիկ քաղաքից: Նրանցից ոմանք կամավորականներ էին, մյուսներն այդ ընթացքում ծառայության մեջ էին, ոմանք էլ եռամսյակային կարգով էին պատերազմի դաշտում: Վերջիններից էր նաեւ **Աշոտ Տոնոյանը (Աշիկ)**, ումից լածս առաջին արտահայտությունը հետեւյալն էր. «Ամեն ինչ շատ լավ է, մենակ, որտեղ թշնամի կա, պիտի սպանես»:

«1994թ., 2-րդ հավաքին եմ գնացել Արցախ: Վակուումային էլեկտրովառարանների գործարանում էի աշխատում, երբ հրաման եկավ, որ 3 «աշխատող» է պետք: Վիճակահանություն անցկացրինք: Վստահ էի, որ ես եմ լինելու ու բոլորին էլ հանգստացնում էի: Այդպես էլ եղավ», հիշում է Աշիկը եւ ավելացնում. «Պաթետիկ բաներ չեմ ասի, թե ծնողներս ճակատս պաչեցին, ասին՝ անպայման գնա: Չէ՛, ոչ մի ծնող էլ որդուն նման տեղ չի ուզում ուղարկել, բայց որ եկել էր ժամանակը, պիտի հարմարվեին»:

Ապրիլի 1-ին նրան եւ մյուսներին 10 օրով տարան Գյումրի, որտեղ ուսումնամարզական հավաք անցկացրին, ծանոթացրին զենքին, հետո տարան Ստեփանակերտ: Երկու ավտոբուսով են լինում: Ճանապարհին, «բախտի բերմամբ», ավտոբուսներից մեկը, որի մեջ էր նաեւ Աշիկը, փչանում է, իսկ մյուսը գնում է առաջ: Երբ երկու օր հետո հասնում են նաեւ իրենք, նրանցից առաջ հասածներին արդեն բաժանել էին. «Հիմնական զոհերը հենց նրանցից եղան», ցավով հիշում է նա: Աշիկը ընկնում է գեներալ Մանվել Գրիգորյանի բրիգադ՝ «Գյումրու բատալյոն»: Նա պետք է երեք ամիս ծառայեր, որից հետո գործարանից փոխարինող գար, բայց փոխարինողի ուշացման պատճառով չորս ամիս ծառայեց: Երբ այս խումբը հասավ, Մարտակերտն արդեն գրավված էր, իրենք գնացին Նինջաչայ՝ սահմանը հսկելու. «Գետի այս կողմը մենք էինք, այն կողմը՝ թուրքերը: Մեզ իրարից 100-200 մ էր բաժանում, իրենց մոտ արդեն շոգ էր, իսկ մեզ մոտ գիշերները -3-ից -5 աստիճան ցուրտ էր լինում: Մենք լեռների վրա էինք, իսկ իրենց տարածքը հարթավայր էր»: Հայերին հրամայված էր անիմաստ չկրակել, բայց մյուս կողմից այնքան զինամթերք ունեին, որ մերոնց դադար չէին տալիս, չէին թողնում նույնիսկ, որ քնեն. «Դիպուկահարներ կային, որ մշտապես աշխատում էին. եթե մի չնչին շարժում էլ լինում էր, կրակում էին: Փորձի համար էլ, որ ճիպոտով մի թուփ էինք շարժում, միանգամից կրակոց էր հաջորդում»: Բայց մերոնք էլ պակաս ուշադիր չէին. մի քանի անգամ ադրբեջանցիներից փորձել են անցնել մեր կողմ՝ հետախուզության, «կրակոցով-բանով հասկացրել ենք, որ քնած չենք, որ առիթ տան, հերները կանիծենք»: Ազատամարտիկը խոստովանում է, որ զինվորականի գործը հենց մարդ սպանելն է, թեեւ դա այնքան էլ հեշտ գործ չէ, եթե նույնիսկ թշնամուդ ես սպանում: Բայց երբ հարցրեցի, թե արդյոք նրա համար թուրքն ու ադրբեջանցին մե՞կ են, նա պատասխանեց. «Հա, բա ինչ են, դրանք ազգ չեն, ցեղակույտ են, հենց առաջին հնարավորության դեպքում մեզ կուտեն, կոչնչացնեն: Համ էլ դրանք վախկոտ են: Վախկոտներ մերոնց մեջ էլ կա, բայց իրենց մեջ համատարած բնույթ է կրում»:

Հիմնականում տղերքը սոված չէին մնում, «յոլա գնում էին», բայց սնունդ բերողները կրակոցների տակ չընկնելու համար պաշարը թողնում էին 7-8 կմ հեռավորության վրա, ու սահմանապահները ստիպված էին ամեն անգամ բերելու համար այդքան տարածություն անցնել: Բայց մի պահ սննդի հարցը շատ սուր էր, ինչ-որ ժամանակ սոված էին մնացել: Մի գիշեր կրակաշարքից արթնանում են, արագ գրավում են իրենց տեղերը. «Մեկ էլ Գրիգորը, թե, տղե՛ք, էկե՛ք, տեսե՛ք՝ ինչ եմ զարկե: Գնացինք տեսանք, որ վրան լրիվ վայրենակերպի փշեր են. ոզնու պես կենդանի է՝ մեծ սեւ-սպիտակ փշերով, որը հենց վտանգ է զգում, փշերը թողնում է: Գրիգորը խփել էր, սա փշերը թողել էր, մենք էլ կարծել էինք՝ կրակում են: Լավ է, որ Գոքորի շորերը հաստ էին, փշերը մարմնին չէին հասել: Կրակ վառեցինք, տրան խորովեցինք, ուժեղ ծուխ ընկավ, բայց սոված էինք, էլ ի՞նչ ծուխ, ի՞նչ բան: Կերանք համով, շատ համով էր», պատմում է Աշիկը ու ծիծաղում. «Կամ էլ մենք էինք շատ սոված»:

Ազատամարտիկն ասում է, որ զինամթերքի տեսակետից էլ խնդիր չկար. այդտեղ մի հարմար դիրքով ծառ չէր մնացել, որ կողքը փորած ու զենք պահած չլինեին: «Մարդիկ կան, որ պատերազմի դաշտում չեն եղել, բայց ավելի շատ գործ են արել՝ հայթայթել ու մեզ են հասցրել ամենակարեւորը՝ զենք-զինամթերքը»:

Մայիսի 12-ին զինադադար է կնքվում, մարտական գործողությունները իբր դադարեցվում են, բայց դա ձեւական բնույթ էր կրում. ինչպես միշտ, մերոնց հրամայված էր չկրակել, իսկ այն կողմից կրակում էին. «Իրենք ցերեկները հանգիստ դիրքերում ման էին գալիս, իսկ գիշերները դիպուկահարները սկսում էին կրակել», պատմում է նա ու ցավով ընդգծում. «Քաղաքականությունը մեզ խանգարեց, թե չէ մինչեւ Բաքու կհասնեինք: Դժվար՝ լեռնային մասերը գրավել էինք, հարթավայրերը գրավելը արդեն դժվար չէր»:

Աշիկը հիշում է իրենց հարեւան «Եղնիկներ» ջոկատից սումգայիթցի Էնգելսին, որի հարազատներին նրա իսկ աչքի առջեւ դաժանորեն սպանել էին սումգայիթյան կոտորածների օրը: Եղբոր հետ էր պատերազմի դաշտում, որը նույնպես զոհվեց մարտի դաշտում: Էնգելսը հետախույզ էր, բնույթով՝ սափաստանի գայլ, այնպիսի հզոր ոգու տեր, որ իր հետեւից հարյուրների կտաներ, մենակ կգնար հետախուզության, ոչնչից վախ չուներ. «Անցակետը միայն մեր մոտից էր, մեզ հրամայված էր, որ նրան թողնեինք: Էդպես ծանոթացանք հետը: Ֆենոմեն էր էդ տղեն: Իրեն հայրենասիրությունից բացի վրեժխնդրության ոգին էր առաջ տանում: Իր, իր նմանների ոգին էր հիմնականում մեր հաղթանակի գրավականը», հիշում է ազատամարտիկն ու հավելում. «Թուրքերը վատ զենք չունեին, բայց ոգի չունեին, չգիտեին՝ ինչի համար են էդտեղ, ինչի են կռվում»:

Երբ խնդրեցի նշել, թե ինչ մարտական գործողությունների է մասնակցել, իմ շատ համեստ զրուցակիցը ծիծաղելով պատասխանեց. «Ոչ մի մարտական գործողությունների էլ չեմ մասնակցել, խելոք պոստում կանգնել եմ ու հետ եմ եկել», հետո ցավով ավելացրեց. «Հոյակապ տղերք կային, որ գնացին, զոհվեցին: Ափսոս էին... Բայց դե պատերազմ էր, առանց դրա էլ չէր լինի... Ինչ որ եղավ, մեր զոհված տղերքի շնորհիվ եղավ, իսկ ես իրենց մայրերի առաջ ինձ մեղավոր եմ զգում... Աստված չտա՝ պատերազմ լինի, առաջինը ես կերթամ իմ զոհված ընկերների համար»:

Ամենաշատ զոհերը տվել են մայիսի 3-ին: Հենց այդ օրն էլ ամեն տարի ողջ մնացած տղերքը գնում են Արթիկի իրենց զոհված ընկերների գերեզմանին ծաղիկ դնելու ու հավերժ հիշելու...

**ԱՆԻ ՌԱՓՅԱՆ**
**ԵՊՀ, ժուռնալիստիկայի ֆակ.-ի մագիստրանտ**

# Ճանաչենք մեր երկրի ճիշտ քարտեզը

Շատերը հեռուստացույցով տարբեր ալիքներով եղանակի տեսություն դիտելիս նկատած կլինեն՝ եթերի ընթացքում ցուցադրվող քարտեզները փոխվել են: Գրեթե բոլոր հեռուստաընկերությունները սկսել են եղանակի տեսության ժամանակ եթեր հեռարձակել ՀՀ եւ ԼՂՀ ճիշտ քարտեզը: Մինչ այդ ցուցադրվում էր Սովետական Միության ժամանակ Ադրբեջանի կազմում գտնվող, այժմ գոյություն չունեցող ԼՂԻՄ-ի (Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզ) քարտեզը, որը չի ներառում Ղարաբաղյան պատերազմի ժամանակ ազատագրած տարածքները:

««Հանուն ճիշտ քարտեզների» նախաձեռնությունն սկսել է գործել 2008 թվականից: Մի խումբ բլոգերներ եւ ուսանող-ակտիվիստներ որոշեցին պայքարելով հասնել նրան, որ հեռուստատեսությամբ ցուցադրվեն ԼՂՀ ճիշտ սահմաններով քարտեզներ», պատմում է նախաձեռնության համահեղինակ, բլոգեր **Տիգրան Քոչարյանը** (www.pigh.tv): Կազմավորվեց նախաձեռնող խումբ:

«Սկզբնական շրջանում կազմակերպեցինք մի ակցիա. նախաձեռնության անդամներով այցելեցինք եթերով սխալ քարտեզներ ցույց տվող հեռուստաընկերություններ, ԶԼՄ-ներ եւ իրենց նվիրեցինք ՀՀ եւ ԼՂՀ ճիշտ քարտեզը: Սակայն սխալ քարտեզները շարունակվում էին եթեր հեռարձակվել՝ հասարակության մեջ ստեղծելով իրականության խեղաթյուրված պատկեր: Սայլը տեղից շարժվեց այն ժամանակ, երբ ԱԼՄ հեռուստաընկերությունը սկսեց եղանակի տեսության ժամանակ ցույց տալ ճիշտ քարտեզը: Քարտեզների տարածման հարցում մեզ շատ աջակցեց նաեւ http://www.meteo-tv.am/ -ն՝ կայքում տեղադրելով ճիշտ քարտեզը», պատմում է բլոգերը:

«Այսօր Հայաստանում միայն երկու հեռուստաընկերություն է մնացել («Հ2» եւ «Շողակաթ»), որ եղանակի տեսության ժամանակ ցույց են տալիս սխալ քարտեզը: Ինչ վերաբերում է կայքեր ունեցող տպագիր ԶԼՄ-ներին, ապա այնտեղ հիմնականում դրվում է ճիշտ քարտեզը», փաստում է Տիգրան Քոչարյանը:

«Սխալ քարտեզներ ցույց են տալիս ոչ միայն եղանակի տեսության ժամանակ, այլեւ օգտագործվում են գովազդային հոլովակներում», ասում է Տիգրան Քոչարյանը:

«Այսօր մեր հայրենակիցներից շատերն ուղղակի ծանոթ չեն Արցախում տիրող իրավիճակին, պատկերացում չունեն, թե որ տարածքն է ԼՂՀ կազմում, որ շրջաններն են վերահսկվում մեր կողմից եւ որն է այդ տարածքների ռազմավարական նշանակությունը:

«Հրադադարի պայմանագրի կնքումից 17 տարի անց անգամ շատերը դեռ մտածում են Հայկական ԽՍՀ ու ԼՂԻՄ ուրվագծերով: Ըստ իրենց՝ Քարվաճառում (ներկայիս Շահումյանի շրջանը), Քաշաթաղում եւ ազատագրված մյուս շրջաններում ապրող, տարածքը վերաբնակեցրած տասնյակհազարավոր մեր հայրենակիցներն ուղղակի գոյություն չունեն. այդ տարածքը պատկերվում է Ադրբեջանի կազմում»,- ասում է նախաձեռնության համահեղինակ, տեղեկատվական պատերազմների գծով մասնագետ **Կարեն Վրթանեսյանը**:

«Իրականությունից անտեղյակ մարդուն շատ հեշտ է խաբել, դրդել այնպիսի քայլերի, որոնք ի վնաս իրեն կլինեն: Իրականությունից կտրվելը դարձնում է մեզ խոցելի, առաջին հերթին ադրբեջանական ռազմատենչ քարոզչության համար: Եվ սա այն դեպքում, որ մեր ձեռքում եղած պաշտպանական ռեսուրսներից ամենակարեւորներից մեկը ռազմավարական կարեւորություն ունեցող դիրքեր ունենալն է, ինչին էլ նպաստում են ազատագրած հողերը: Սակայն մեզանում այս իրողությունը քչերն են գիտակցում եւ հասկանում: Այս ամենին նպաստում են նաեւ եթերով սխալ քարտեզ ցույց տվող ԶԼՄ-ները»,- ասում է Կարեն Վրթանեսյանը:



«Զգիտեմ ինչու՝ շատերի համար Սովետական Միության տարիներին ռուս եւ թուրք չինովնիկների քմահաճույքով գծված ԼՂԻՄ-ի քարտեզը այսօր ավելի հարազատ է, քան Արցախի Հանրապետության մայր օրենքով՝ սահմանադրությամբ հաստատված սահմանները, ու հարյուրավոր հայերի մահվան գնով ազատագրված տարածքը»,- ասում է նախաձեռնության անդամ, բլոգեր **Սեդրակ Մկրտչյանը**:

«Հանուն ճիշտ քարտեզների» նախաձեռնությանը նպաստելու համար Սեդրակ Մկրտչյանը ստեղծել է վեբկայքային քարտեզների երկու կայք, որոնցից մեկը ներկայացնում է ՀՀ ու ԼՂՀ ճիշտ քարտեզը (http://www.map-armenia.com), իսկ մյուսը՝ Ադրբեջանի Հանրապետության ճիշտ քարտեզը՝ առանց ԼՂՀ-ի (http://www.map-azerbaijan.com):

«Որոշակի աշխատանք կատարված է, արդյունքը ակնհայտ է: Սակայն դեռ աշխատելու շատ տեղ ունենք: Կարեւոր է նաեւ արտասահմանյան կայքերում ճիշտ քարտեզների տարածումը, սակայն դրա մասին ներկայումս խոսելն անգամ անիմաստ է. նախ եւ առաջ մենք մեր երկրի ներսում պետք է սովորենք ճանաչել եւ ընդունել մեր երկրի, պետականության ճիշտ քարտեզը»,- ասում է Սեդրակ Մկրտչյանը:

«ՀՀ քարտեզագրության ինստիտուտը վաղուց արդեն անցել է ճիշտ, ազատագրված հողերը ներառող քարտեզներ տպագրելուն: Ինստիտուտ, որը պաշտոնական քարտեզների մատակարարն է Հայաստանում», հավելում է Սեդրակ Մկրտչյանը:

«Ուրախանալի եւ հուսադրող փաստերից մեկը այն է, որ ԿԳ նախարարության նախաձեռնությամբ 2010 թվականից տպագրվող դասագրքերում այլեւս չենք տեսնի ՀՀ եւ ԼՂՀ սխալ քարտեզ», նշում է Տիգրան Քոչարյանը:

«Երբ որ անզեն աչքով անգամ նայում ես ճիշտ քարտեզին, տեսնում ես՝ ազատագրված տարածքները կպած են Հայաստանի Հանրապետության մարմնին: Պետք է այս բոլոր տարածքները սրբությամբ պահել, որովհետեւ դրանք ոչ միայն արյան գնով ազատագրված են, այլ նաեւ մեր անկախության եւ անվտանգության հիմքն են:

Այսօր Հայաստանի 44.000 քառ. կմ տարածքը շնչում է: Սա ամբողջական օրգանիզմ է, որ կարող է աշխատել եւ հարստեւել: Պետք է զարգացնել այդ օրգանիզմը ի նպաստ մեր հայրենիքի ապագայի եւ բարօրության», ասում է «Գուրգեն Մելիքյան» հիմնադրամի նախագահ, ԵՊՀ արեւելագիտության ֆակուլտետի դեկան **Գուրգեն Մելիքյանը**:

«Հիմնադրամի աշխատանքների բերումով եւ առհասարակ շատ հաճախ եմ լինում Արցախում, հատկապես Բերձորում (Լաչին), շփվում եմ տարածքը վերաբնակեցրած բնակչության հետ եւ կարող եմ փաստել՝ իրենք հավատում են որ ապրում են իրենց հայրենիքում, հայրենի հողի վրա, իսկ մեզանից շատերն անգամ այդ հայրենիքի ճիշտ քարտեզը չեն ճանաչում», ասում է պարոն Մելիքյանը:

**ԼԻԼԻԹ ՄԱՐԳԱՐՅԱՆ**
**ԵՊՀ ժուռնալիստիկայի 2-րդ կուրսի ուսանողուհի**

# «Շփման խմբի» հիմնադրամ Լիբիայի ընդդիմության համար



Լիբիայի հարցերով զբաղվող միջազգային «շփման խումբը» որոշել է ժամանակավոր հիմնադրամ ստեղծել լիբիացի ընդդիմադիրներին օգնելու համար:

Ֆրանսիայի արտգործնախարար Ալեն Ժյուպեն հայտարարել է, որ հիմնադրամը առաջիկա շաբաթներին սկսելու է միջոցների բաշխումը: Այդ մասին հաղորդում է Ֆրանսպրեսը, նշելով, որ ընդունված որոշման մանրամասնությունները դեռ չեն հրապարակվել:

Իտալիայի արտգործնախարար Ֆրանկո Ֆրատինին իր հերթին Հռոմում հայտարարել է, որ ֆինանսական նոր մեխանիզմի ստեղծումը թույլ կտա միջոցներն արդյունավետորեն փոխանցել լիբիայի ապստամբներին:

Ավելի վաղ լիբիացի ապստամբների Անցումային ազգային խորհուրդը հայտարարել էր, որ առաջիկա ամիսներին իրեն 2-3 մլրդ դոլար է հարկավոր զինծառայողներին ռոճիկները վճարելու, պարեն եւ դեղորայք գնելու համար:

Մեծ Բրիտանիայի արտգործնախարար Ուիլյամ Հեյգը հաստատել է, որ Լիբիայի ընդդիմության համար նախատեսված ֆինանսական օգնությունը չի ծախսվելու զենքի ձեռքբերման նպատակով:

«Շփման խումբը» մտադիր է օգտագործել Մուամմար Քադդաֆիի սառեցված հաշիվների գումարները: Լիբիայի կառավարությունը ԵՄ-ի եւ ԱՄՆ-ի այդ մտադրությունը համարում է «ծովահենություն», նշում է Ռոյթեր գործակալությունը:

Քադդաֆիի եւ կառավարության անդամների հաշիվներում սառեցված միջոցները «Լիբիայի ժողովրդին» փոխանցելու մտադրության մասին երեկ հայտարարեց ԱՄՆ պետքարտուղար Հիլարի Քլինթոնը: Խոսքը 90 մլրդ դոլարի մասին է. 30 մլրդ սառեցված է ԱՄՆ-ում, 60 մլրդ՝ ԵՄ-ում:

Լիբիայի փոխարտգործնախարար Խալեդ Քաիմը այս կապակցությամբ ասաց. «Սառեցված հաշիվների հետ կապված ամեն մի գործողություն նման է ծովահենության: Ապստամբները իրավաբանական անձ չեն, երկիր չեն: Լիբիան հանրաքվեով կամ ՄԱԿ-ի բանաձեւով մասնատված չէ: Դա անօրինական է: Եվ եթե մենք լռենք, ապա կապրենք ջունգլիում»:

Փոխարտգործնախարարի խոսքերով, սառեցված ակտիվների փոխանցումը բացասաբար կանդրադառնա նաեւ ողջ աշխարհում օտարերկրյա ներդրումների վրա: Ներդնող երկրները կվախենան, որ սեփական տարածքներում անկայունության առաջին իսկ նշանների դեպքում օտարերկրյա տնտեսության մեջ ներդրված միջոցները կառգրավվեն եւ կփոխանցվեն ապստամբական խմբավորումներին:

Լիբիայի կառավարության անդամների եւ Մուամմար Քադդաֆիի ընտանիքի նկատմամբ ԱՄՆ-ում եւ ԵՄ-ում ֆինանսական պատժամիջոցներ էին ձեռնարկվել 2011-ի փետրվարին:

## WikiLeaks. ԱՄՆ-ը ՄԱԿ-ի կենտրոնավայր չի թողնում անհաճո գործիչներին

ԱՄՆ-ը հաճախ այցագրային խոչընդոտներ է ստեղծում, որպեսզի օտարերկրացի պետական գործիչները եւ դիվանագետները ժամանակին չհասնեն ՄԱԿ-ի կենտրոնակայանի միջոցառումներին: Այս առումով շատ երկրների կասկածները հաստատվում են ՄԱԿ-ում ԱՄՆ մշտական ներկայացուցիչի ծառայողական հեռագրի հրապարակումների շնորհիվ:

WikiLeaks կայքում հրապարակված հեռագրում ասվում է, որ իրանցի պաշտոնյա Ալիռզա Սալարի Շարիֆաբադին ամերիկյան այցագիր էր խնդրել ՄԱԿ-ում միջազգային ֆինանսատնտեսական ճգնաժամին նվիրված հանդիպմանը մասնակցելու համար: Հանդիպումը պետք է կայանար 2009-ի հունիսի վերջին, բայց ԱՄՆ իշխանությունները ՄԱԿ-ում Իրանի ներկայացուցչությանը միայն հուլիսի վերջին էին ծանուցել այցագրի խնդրանքի մերժման մասին:

Նյու Յորքում ՄԱԿ-ի կենտրոնակայանի ներկայությունը կարգավորող միջազգային համաձայնագրերը ԱՄՆ-ին պարտավորեցնում են ժամանակին այցագրեր տրամադրել օրինական դիվանագիտական նպատակներով ՄԱԿ մեկնող օտարերկրյա պատվիրակություններին: Այս համաձայնագրերը ընդհանուր առմամբ կատարվում են, բայց լինում են նաեւ բացառություններ, նշում է ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ը:

Foreign Policy հանդեսը հիշեցնում է, որ ԱՄՆ-ը Ռոնալդ Ռեյգանի օրոք (1988-ին) հրաժարվեց այցագիր տալ պաղեստինցիների առաջնորդ Յասեր Արաֆաթին, եւ ՄԱԿ-ի Ընդհանուր ժողովը Պաղեստինին նվիրված նիստը ցուցադրաբար անցկացրեց Ժնեւում: Բացի դրանից, յուրաքանչյուր աղմկալի մերժում ուղեկցվում է շարքային պաշտոնյաների հետ կապված բազմաթիվ միջադեպերով:

Շարիֆաբադիի դեպքում ՄԱԿ-ում ԱՄՆ մշտական ներկայացուցիչ Սյուզան Ռայսը նշել է, որ կազմակերպության աշխատակազմի իրավաբանական ստորաբաժանման աշխատակիցներին տրվել են ԱՄՆ ազգային անվտանգության շահերով թելադրված սովորական բացատրություններ:

«Բացատրություններն ընդունվեցին, բայց ՄԱԿ-ի իրավաբանները զարմացած էին, որ այցագիրը մերժելու որոշումն ընդունվել է միջոցառումից գրեթե մեկ ամիս հետո», գրում է Ռայսը, ավելացնելով, որ «ՄԱԿ-ի իրավաբանական ծառայությունում այցագրերի տրամադրման ձգձգումներն ու մերժումները համարում են լուրջ խնդիր»:

Սյուզան Ռայսի կարծիքով, նմանօրինակ դեպքերը «խարխլում են վստահությունը» ԱՄՆ-ի հանդեպ:

WikiLeaks-ի հրապարակման անմիջական առիթը այն աղմկալի պատմությունն է, երբ ՄԱԿ-ում Լիբիայի իրադրության քննարկման ժամանակ ԱՄՆ-ը այցագրային մեխանիզմների չարաշահման միջոցով փաստորեն ՄԱԿ չթողեց Լիբիայի կառավարության ներկայացուցիչներին:

## Իտալացի զինվորները կհավաքեն Նեապոլում կուտակված աղբը

Վարչապետ Սիլվիո Բեռլուսկոնին որոշել է բանակայիններին ներգրավել Նեապոլում կուտակված աղբի հավաքման աշխատանքներում: Ֆրանսպրեսի տվյալներով, մայիսի 9-ից սկսած 170 զինծառայող կմաքրի քաղաքի փողոցները:

Նեապոլում աղբահանության հետ կապված բարդություններն ավելի քան 15 տարի շարունակվում են աղբանոցներում տեղի պակասի պատճառով: 2008-ին Բեռլուսկոնին խոստացավ լուծել աղբի խնդիրը, բայց մինչեւ օրս քաղաքում էական փոփոխություն չի նկատվում:

Իրավիճակը սրվեց 2010-ի նոյեմբերին, երբ հասարակայնության ճնշման ներքո աղբանոցները փակվեցին, սակայն իշխանությունները թափոնների պահեստավորման, ոչնչացման կամ վերամշակման նոր տեղեր չհատկացրին: Բեռլուսկոնիի խոսքերով, տեղական իշխանությունները չեն կարողացել աղբակիզման գործարանների կառուցման մրցույթ կազմակերպել:

Նախնական գնահատումների համաձայն, Նեապոլի փողոցներում կուտակված է մոտ 3500 տոննա աղբ, որի կեսը քաղաքի կենտրոնում է:

Վարկածներից մեկի համաձայն, Նեապոլում աղբի հետ կապված բարդությունները ստեղծում է տեղական մաֆիան՝ «կամոռան», որը վերահսկում է թափոնների օգտահանման շահութաբեր բիզնեսը: «Կամոռայի» պատճառով տեղական աղբանոցները չեն կարողանում վերահսկել աղբանոցները եւ թափոնների օգտագործման բնապահպանական անվտանգությունը:

**Մ. ՆԱՀԱՆԳՆԵՐ**

## Նահանգապետ Դեւալ Պատրիքը հռչակվեց «Հայերի բարեկամ»



Ամերիկահայ համայնքին ցուցաբերած իր աջակցության համար Ամերիկայի հայկական եկեղեցու արեւելյան թեմը Մասաչուսեթսի նահանգապետ Դեւալ Պատրիքին հռչակել է 2011 թվի «Հայերի բարեկամ», տեղեկացնում է «Արմինյն միրոր սփեքթեյթր» թերթը: Այդ առթիվ հրապարակված հավաստագիրը պաշտոնապես նրան է հանձնվել ապրիլի 28-ից մայիսի 1-ը տեղի ունեցած տարեկան համագումարի ընթացքում:

«Մենք դարձել ենք այն, ինչ կանք այսօր շնորհիվ Հայոց ցեղասպանության նման սարսափներ դիմագրավելու մեր պատրաստակամությանը... Ես հպարտ եմ այսօր ձեզ հետ լինելու եւ հարգանք տածելու մարդկային հաստատակամությանը, որովհետեւ այս այգին հենց դա է խորհրդանշում: Միաժամանակ դա պատմական փաստի ճանաչում է: Այո, Հայոց ցեղասպանությունը տեղի ունեցել է, եւ չի կարելի ժխտել», ասել էր նա անցյալ տարվա սեպտեմբերին՝ ներկա գտնվելով «Հայկական ժառանգության այգու» բացման հանդիսությանը:

Դեւալ Պատրիքը մեծապես նպաստել էր այդ այգու կայացմանը՝ կարողանալով հակահարված տալ քաղաքական հակառակորդներին, որոնք դեմ էին դրա շինարարությանը:

Նա ավարտել է Հարվարդի համալսարանի իրավաբանական ֆակուլտետը: 1994-ին նախագահ Բիլ Քլինթոնը նրան նշանակել էր քաղաքացիական իրավունքների գլխավոր դատախազի օգնական: 2010-ի նոյեմբերին նա երկրորդ անգամ ընտրվել էր նահանգապետի պաշտոնում:

Հ.Ծ.

## Սթիվ Օղաբաշյանը մասնակցում է Ֆիլադելֆիայի քաղխորհրդի ընտրություններին



Քառասունմեկամյա իրավաբան Սթիվ Օղաբաշյանը պատրաստվում է մասնակցել մայիսի 17-ին կայանալիք Ֆիլադելֆիայի քաղաքային խորհրդի նախնական ընտրություններին, տեղեկացնում է «Արմինյն միրոր սփեքթեյթր» շաբաթաթերթի ապրիլի 16-ի համարը: Նա արդեն իսկ հավաքել է հազար ստորագրություն քաղաքում գրանցված Հանրապետական կուսակցության համակիրներից եւ ինը այլ թեկնածուների հետ պայքարի մեջ է: Նախնական այդ ընտրություններում առաջին հինգ տեղերը գրաված թեկնածուները Դեմոկրատական կուսակցության հինգ թեկնածուների հետ մասնակցելու են նոյեմբերին կայանալիք վերջնական ընտրություններին:

Օղաբաշյանը ավարտել է Ռադնորի «Հայ քույրերի ակադեմիան», տնտեսագիտության բակալավրի աստիճան է ստացել Վիրջինիայի համալսարանից, ինչպես նաեւ իրավագիտության աստիճան՝ Վիլանովա համալսարանից: Որպես իրավաբան աշխատել է Ֆիլադելֆիայում եւ Տոկիոյում (Ճապոնիա), որտեղ ապրել է երեք տարի: Ճանաչված դաշնակահար է եւ հայկական համայնքի ակտիվ անդամներից: Եղել է ՀԲԸՄ-ի Ֆիլադելֆիայի մասնաճյուղի երիտասարդ արհեստավարժների առաջին նախագահը:

Հ. Ծ.

## Տարածաշրջանի քաղաքական զարգացումներին Թուրքիայի միջամտությունն ուղղորդվում է Վաշինգտոնից

*1-ին էջից*

Մոտավորապես նույն իրավիճակն է նաեւ Լիբիայում: Դրանում համոզվելու համար կարելի է անդրադառնալ Էրդողանի մայիսի 3-ի հայտարարությանը, որտեղ Թուրքիայի վարչապետը զբաղեցրած պաշտոնից անհապաղ հրաժարվելու եւ Լիբիայից հեռանալու կոչով Մուամմար Քադաֆիին դիմելիս նորից կրկնեց Օբամային: Դրա պատասխանը, սակայն, չուշացավ:

Մայիսի 4-ին Լիբիայի փոխարտգործնախարար Խալիդ Կայիմը Տրիպոլիում հայտարարեց, որ դա Թուրքիային ամենեւին չի վերաբերում: Ի դեպ, Թուրքիան արդեն փակել է Տրիպոլիում իր դեսպանատունը: Ըստ երեւույթին դա պայմանավորված է Լիբիայում տիրող հակաթուրքական տրամադրություններով, որոնց մասին անձամբ արտահայտվեց վարչապետ Էրդողանը:

Չի բացառվում, որ շուտով հակաթուրքական տրամադրություններ առաջանան նաեւ Սիրիայում, քանի որ վարչապետ Էրդողանը Սիրիայի նախագահ Բաշար Ասադին դիմելիս նորից կրկնել է «ժողովրդի ձայնին ականջ դնելու» ԱՄՆ-ի նախագահի կոչը, իհարկե, ժողովուրդ ասելով վերջինի նման նկատի է ունեցել խռովարարներին: Ինչ վերաբերում է թուրքական մամուլին, ապա դա էլ արեւմտյան մամուլի օրինակով հեղեղված է սիրիական հոդվածներով: Այլ կերպ, թուրքական մամուլն էլ Սիրիայում ծայր առած ցույցերի հարցում ընդհանուր առմամբ հետեւում է աշխարհի այսպես կոչված առաջնակարգ լրատվամիջոցներին, որպեսզի ցանկացած կասկածով ապակողմնորոշի համաշխարհային հասարակական կարծիքին, թե Բաշար Ասադը խաղաղ ցուցարարների դեմ դիպուկահարներ է օգտագործում, երկրում համատարած ձերբակալություններ են եւ վերջին շաբաթների ընթացքում, ինչպես երեկ գրել էր «Դունյա Բյուլթենի» լրատվական գործակալությունը, ավելի քան 500 ցուցարար է սպանվել:

Այս ամենը հիմք է տալիս ենթադրելու, որ Հյուսիսային Աֆրիկայի եւ տարածաշրջանի քաղաքական զարգացումներում Թուրքիայի միջամտությունն ուղղորդվում է Արեւմուտքից, այսինքն՝ Անկարայի միջնորդական առաքելությունը չի կարող ինքնուրույն նախաձեռնության արդյունքը լինել: Սա նշանակում է, որ նա տարածաշրջանում ոչ թե ինքնուրույն նախաձեռնությամբ դերակատարություն է ստանձնելու, այլ այդ դերակատարությունը նրան Վաշինգտոնից տրամադրելու են, որպեսզի միանա այն երկրներին, որոնց դերը սահմանափակվում է ամերիկյան տարածաշրջանային քաղաքականության շարունակականությունն ապահովելու առաջադրանքով:

# 85-ամյա Հանրային ռադիոյի ազդականչերը

Մանկական տարիներից քայլում եմ նրա հետ իմ բաժին ժամանակի արահետներով, եւ անկարող եմ հաշվել, թե քանի ծաղկաբույր լուսաբաց եմ դիմավորել նրա հետ, քանի տոթակեզ միջօրե, խորհրդավոր երեկո եւ խաղաղ ու թախծոտ մայրամուտ: Անդավաճան ընկեր է նա, հաճելի, իմաստուն զրուցակից, բարի խորհրդատու եւ... խորագետ, անկաշառ ուսուցիչ. «Բոլորը տամ ու նվիրեմ»:

Ու նվիրելով, բաշխելով էլ ընթանում է. կամրջելով երկու դարերը. նրա հաստատուն կամարների տակով են անցել ժամանակի և՛ վարար գետերը, և՛ ձնհալի առաջացրած հեղեղները, և՛ պարզված, զուլալ ջրերը:



Դիմացել է և՛ փառքի դափնիների ծանրությանը, և՛ մութ ու ցուրտ տարիների փորձությանը, և՛ օտարաշունչ ու օտարահունչ հոսանքներին: Դիմացել է, քանզի շաղախն ամուր էր` ազգայինի եւ համամարդկայինի խառնուրդ: Դիմացել է, քանզի շաղախի մեջ նվիրյալների հոգու ավյուն կար, ազնիվ տքնանքի քրտինք, հայի չմակարդվող, կենսունակ արյուն եւ ազգային հազարամյա, բյուրեղացած մշակույթ:

Անձեռակերտ, ոգեղեն մի տաճար է Հանրային ռադիոն, որի ամուր սյուներն են եղել խոսքի այնպիսի վարպետներ, ինչպիսիք են Վարուժան Օլքինյանը, Վերա Հակոբյանը, Սարգիս Նաջարյանը, Անահիտ Նավասարդյանը, Կարեն Վարդանյանը, Անահիտ Թադեւոսյանը, Ռոզա Ղարիբյանը: Անունների այս փայլուն շքերթի շարունակողներն են այսօր Դավիթ Ղուլղազարյանը, Վահե Հայրապետյանը, իր «Արմասներով» հայ ազգային եւ աշուղական երգարվեստի արմատներից վերընձյուղվող Լուսինե Նազարյանը:

Հանրային ռադիո-ոգեղեն տաճարն ունի եւս մի սյուն-վեստրան, որը մշակութային խորանի մոմերն ինքնարյունով վառ է պահում` այս էլ քանի տարի. զուսպ, բարեկիրթ եւ նուրբ հոգու տեր Օֆելյա Ասատրյանը: Շնորհակալանքի եւ սիրո իմ վարդափունջը նրա համեստությանն ու տքնանքին:

Հիրավի, պատվով, վեհորեն անցած 85-ամյա վաստակած ճանապարհ եւ նվիրյալների փայլուն աստղաբույլ, որոնց ձայնով մեծացել եմ, կրթվել, թրծվել, հուզվել ու... դիմացել, դիմացել ժամանակի միօրինակությանը, դարի խաղերին եւ մարդկային փոթորկի անակնկալներին:

«Արեգ», «Հասակակիցներ», «Գանձարան», «Ձայն մեծաց», «Բյուրակն», «Վերնատուն», «Գրական լաբիրինթոս», «Ստերեո-ստուդիա», «Խելք խելքի»-ահա այն սպասված, հոգի սնող հաղորդումները, որոնցից հատիկ առ հատիկ ամբարել եմ ոսկեհատ ցորենի իմ շեղջը, մաներել-աղացել հոգուս մեջ, դարձրել իմ հաց-հանապազօրյան, ոգեղեն հացը, առանց որի անկարելի է ապրել:

Թումանյանի անմահ գործերի նման հայ մարդու ողջ կյանքի ուղեկիցն է սիրելի հոբելյարը` մանկության կանաչ դաշտերից մինչեւ ծերության ճերմակ կատարներ, հոբելյար, որ ժամանակի ցնցումների եւ արժեզրկումների խառնակ ու պղտոր ջրերում իր ազգային նկարագրի մերանը կարողացել է փրկել ու պահպանել (թեպետ մեր օրերի ռադիոյի նորաոճ զգեստի որոշ հատվածներ այնքան էլ իմ` դասական ոճի ճաշակով չեն):

Շնորհավոր հոբելյանդ, 85-ամյա Հանրային ռադիո. դեռ նավարկելու շատ ծովեր ու օվկիանոսներ ունես, ուրեմն բարձրացրու մեր հավաքի խարիսխը, պարզիր մեր սիրո առագաստները, ծածանիր ազգային մշակույթի դրոշը, ժամանակի ղեկը ամուր պահելով` լողա, լողա` վստահ, լողա` վաստակած, լողա` անխորտակ-այլընտրանք չունես...

Քո անխարդախ նվիրյալ, ունկնդիր եւ բարեկամ`

ԳԱՅԱՆԵ ԱԹԱՆՅԱՆ

# Խոսում է Երեւանը

***«Խոսում է Երեւանը». այս խոսքերով առաջին անգամ 1926թ. սեպտեմբերի մեկին եթեր դուրս եկավ ՀՀ Հանրային ռադիոն: Համաշխարհային ռադիոն նշում է իր 116, իսկ ՀՀ Հանրային ռադիոն 85-ամյակը: Տոնի կապակցությամբ զրուցեցինք ՀՀ Հանրային ռադիոյի վաստակավոր հաղորդավար Վարուժան Օլքինյանի հետ:***



**- Հանրային ռադիոն պետք է հասարակական հետաքրքրության որոշակի պահանջներ կատարի: Որքանով է այդ պահանջն այսօր իրական:**

- Հանրային ռադիոն այսօր հենց այդ առաքելությունն է կատարում, այնպես, ինչպես կատարել է տարիներ շարունակ` սկսած 1920-ական թվականներից: Այն կարողանում է բավարարել հասարակության տարբեր շերտերի պահանջները` բազմիցս համոզվել եմ տարբեր մարդկանց հետ զրույցներում: Հանրային ռադիոն եթեր է հեռարձակում տարբեր հետաքրքրությունների տեր մարդկանց համար հաղորդումներ` մանկականից մինչեւ երիտասարդական, երաժշտական: Հանրայինը նաեւ ունի լուրջ արտաքին քաղաքականություն` հեռարձակելով 10-ից ավելի լեզուներով հաղորդումներ` ամենատարբեր բնագավառների մասին:

**- ՀՀ հանրային ռադիոն իր հաղորդումներում արդյոք կարողանո՞ւմ է ապահովել բազմակարծությունը:**

- Այո, ապահովվում է: Աշխատելով լրատվական ռադիոհաղորդումներում, կարող եմ ասել, որ մենք հանրությանը ներկայացնում ենք փաստն ինչպես որ կա, առանց մեկնաբանություններ տալու, ինչը պետք է անի լրագրողը:

**- Կրթության եւ մշակույթի չափանիշները պետք է լինեն որակյալ ռադիոծառայության մեկնակետը, եթե ցանկանում է կատարել հանրության կողմից իրեն վստահված դերը: Ըստ Ձեզ, ինչպիսի՞ն է այսօր իրավիճակը Հանրային ռադիոհաղորդումներում:**

- Մեզ մոտ շատ մեծ տեղ է տրվում մշակութային հաղորդումներին: Օրինակ` ռադիոթատրոնը, որը չունի եւ չի էլ կարող ունենալ ոչ մի ուրիշ ռադիո: Այն եթեր է հեռարձակվում անվանի դերասանների կատարմամբ: Չկա ոչ մի ռադիոկայան, որ ունենա այնքան մշակութային ռադիոհաղորդումներ, որքան Հանրայինը: Հեռարձակելով գրականության, նկարիչների, մեր մեծերի մասին հաղորդումներ, ինքնըստինքյան ձեւավորում ենք ճաշակ, վերաբերմունք սեփականի նկատմամբ:

**- Ձեր շնորհավորանքի խոսքը Ռադիոյի օրվա կապակցությամբ:**

- Մեծագույն հաճույքով շնորհավորում եմ իմ բոլոր գործընկերներին: Ցանկանում, որպեսզի բացի առողջությունից եւ երկար տարիների բեղմնավոր կյանքից, մեր ավանդույթները շարունակվեն: Մենք լինելով բավականին մեծ կոլեկտիվ, կարողանում ենք պահպանել մարդկային հրաշալի հարաբերություններ: Ավելի համերաշխ կոլեկտիվ, քան Հանրային ռադիոյինը` դժվար թե լինի: Ասածիս մեջ իր կարեւոր դերն ունի Հանրային ռադիոյի գործադիր տնօրեն Արմեն Ամիրյանը:

ՄԱՆԱՆԱ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ

*«**Ազգ»ը** եւս շնորհավորում է Հանրային ռադիոկայանին տոնի կապակցությամբ, ցանկանալով անխափան եթեր եւ հավասարիմ ունկնդիրներ:*

# «Որպես մի դարձող բանազավր»

**Օրերս լույս է տեսել (Ստեփանակերտ, «Ոգի-Նաիրի» հր.) ճանաչված բանաստեղծ Հրանտ Ալեքսանյանի նոր` «Որպես մի դարձող բանազավր» խորագրով ժողովածուն, ուր ընդգրկված են հեղինակի նախորդ` «Բանի բարիտոնը: Երկրի բարիտոնը» գրքից (2007թ.) հետո գրված ստեղծագործությունները` բանաստեղծություններ, դրամատիկական չափածո ասք, թարգմանություններ ռուս եւ եվրոպա-ամերիկյան հեղինակներից:**

**Հ. Ալեքսանյանը ինտելեկտուալ պոեզիայի ակնառու ներկայացուցիչներից է, նրա չափածո բանախոհությունն ունի հայկական ցայտուն դրոշմ, բայց եւ իր շատ գծերով միտված է բանաստեղծության համընդհանրական նորակերտմանը: Իրական-հոգեւոր փաստերի գեղարվեստական վերացարկմամբ բանաստեղծն ուրվապատկերում է մի խոսուն ու հագեցած աշխարհ, ուր անհատն իրեն պաշտպանված է զգում ոգեկան-իմաստային վստահելի ուղենշաններով:**

**Մոտ ապագայում կհրատարակվեն Հ. Ալեքսանյանի անգլերեն եւ գերմաներեն թարգմանությամբ ժողովածուները այդ լեզուներին տիրապետող երկրներում: Մինչ օրս բանաստեղծի գործերը թարգմանաբար լույս են տեսել ռուսերեն, անգլերեն, պարսկերեն, ուկրաիներեն, բուլղարերեն, ռումիներեն եւ բոսնիերեն:**

**Բանաստեղծի նոր գիրքը հրատարակվել է պետական աջակցությամբ:**

ԱՐՄԻՆԵ ՄԵԼԻՔՅԱՆ

ԳՅՈՒՄՐԻ

# Միջազգային գիտաժողով` նվիրված Էդվարդ Միրզոյանի ծննդյան 90-ամյակին

## *«Վերածնունդ» երաժշտական փառատոնի շրջանակներում*

**Վարդան Աճեմյանի անվան պետական դրամատիկական թատրոնի դահլիճում տեղի ունեցած հանդիսավոր բացմամբ մայիսի 5-ին Գյումրիում մեկնարկել է երաժիշտ-կատարողների «Վերածնունդ» միջազգային երրորդ բազմօրյա մրցույթ-փառատոնը: Բացմանը ներկա էին ՀՀ մշակույթի նախարար Հասմիկ Պողոսյանը, Մարդկային ռեսուրսների զարգացման «Փյունիկ» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նախագահ Լեւոն Սարգսյանը, արվեստագետներ տարբեր երկրներից: Փառատոնին իր օրհնության գիրն էր հղել Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսը:**



**Արդեն ձեւավորված ավանդույթով «Վերածնունդ» փառատոնի շրջանակներում անցկացվում է նաեւ «Մշակույթների երկխոսություն. համաշխարհային մշակույթը եւ Հայաստանը» միջազգային գիտաժողով: Այս տարվա գիտական նստաշրջանը, որը աշխատանքն է սկսել մայիսի 6-ին` փառատոնի առաջին օրվա մրցելույթներին զուգընթաց, նվիրված է հայ անվանի կոմպոզիտոր, ԽՍՀՄ ժողովրդական արտիստ Էդվարդ Միրզոյանի ծննդյան 90-ամյակին: Գիտաժողովն առիթ է հարգանքի տուրք մատուցելու մեր ժամանակի երախտաշատ կոմպոզիտորին, մեր օրերի հայացքով անդրադառնալու նրա մեծարժեք ստեղծագործությանը: Հայաստանի եւ արտերկրի հեղինակավոր գիտական ու կրթական կենտրոնների անվանի մասնագետների, գիտնական-արվեստագետների կողմից ներկայացվելու են շուրջ վեց տասնյակ զեկուցումներ ու հաղորդումներ մշակույթի եւ արվեստի տարբեր ոլորտների վերաբերյալ:**

**Առաջին օրը նախատեսված 17 զեկուցումներից Կարինե Ավդալյանի, Սիլվա Վարդանյանի (Գյումրի), Աննա Ասատրյանի, Կարինե Զաղացպանյանի, Սվետլանա Սարգսյանի, Սուսաննա Ղազարյանի (Երեւան) ուսումնասիրությունները նվիրված էին Էդվարդ Միրզոյանի ստեղծագործության տարբեր կողմերին: Հայ-վրաց ազգամիջյան մշակութային առնչություններին էր վերաբերում Ռուսուդան Լորդքիփանիձեի (Վրաստան) զեկուցումը: Մի շարք հետաքրքրական վերլուծություններ կային` նվիրված հայ դասական եւ ժամանակակից կոմպոզիտորների ստեղծագործությունների ժանրային, տեսական եւ այլ առանձնահատկություններին:**

Գ. Ս.

# Նրա նկարների թեման մարդասիրությունն է



Քիմիկ-տեխնոլոգ **Նելլի Աղաջանովան** մասնագիտությամբ թեեւ նկարչուհի չէ, սակայն մանկուց նկարելով հասել է նկարչուհու պրոֆեսիոնալ մակարդակի: Նելլի Աղաջանովայի նկարները պատկերում են բնությունը, մարդուն ու կյանքի զարթոնքը: Երեկ Ժողովրդական արվեստի թանգարանում բացվեց նրա աշխատանքների ցուցահանդես-վաճառքը: Նկարչուհին ասում է, որ սա իր 4-րդ անհատական ցուցահանդեսն է. «Այստեղ ցուցադրվում են վերջին 2 տարվա ընթացքում նկարված աշխատանքները»: Նկարներում գերիշխողը վառ գույներն են, որոնք նա ստանում է գիշերն աշխատելիս: Ասում է, որ սիրում է աշխատել գիշերները:

Ժողովրդական արվեստի թանգարանի տնօրեն **Հովիկ Հովեյանն** էլ ասում է, որ Նելլի Աղաջանովան հորինել է տարվա իր եղանակը` գիշերը.«Նրա աշխատանքները անցյալի, ներկայի ու ապագայի մրմունջներն են», իսկ ակադեմիկոս **Արմեն Գալոյանն** ավելացնում է. «Ճի՛շտ է, Նելլիի նկարները պատկերում են կյանքի զարթոնքը, իսկ դրանց ընդհանուր թեման մարդասիրությունն է»: Պարոն Գալոյանը կարծիք հայտնեց, որ այս կտավները պետք է ցուցադրվեն նաեւ միջազգային ցուցահանդեսներում:

Նելլի Աղաջանովան նաեւ հեքիաթների հեղինակ է, նրա գրած հեքիաթները լույս են տեսել տարբեր լեզուներով ու առանձին գրքերով, որոնց նկարազարդումներն արել է հենց նկարչուհին: Երեխաներին բացի հեքիաթներ նվիրելուց` նրանց հետ հեղինակը կապված է նաեւ մանկավարժական գործունեությամբ. նա Մեսրոպ Մաշտոցի անվան մասնավոր դպրոցի փոխտնօրենն է: Արմեն Գալոյանի խոսքով` նոր կյանքի հմայքը, որը նա պատկերում է նկարներում, փոխանցում է եւ իր սաներին:

Նելլի Աղաջանովայի 49 նկարները Ժողարվեստի թանգարանում կցուցադրվեն մինչեւ մայիսի 13-ը:

Ի. Պ.

ԱԶԳ

# Մարզական

## Կանայք սկսում են շախմատային մրցավեճը

*Էլինա Դանիելյանից սպասելիքները մեծ են*

Այսօր Թբիլիսիում մեկնարկում է շախմատի Եվրոպայի կանանց անհատական առաջնությունը: Մրցաշարի պարգեւները վիճարկող 132 շախմատիստուհիների թվում են Հայաստանի 9 պատվիրակներ` գրոսմայստերներ Էլինա Դանիելյանը, Լիլիթ Մկրտչյանը, Լիլիթ Գալոյանը, Նելլի Աղինյանը, ՖԻԴԵ-ի վարպետներ Աննա Հայրապետյանը, Լիա Մարտիրոսյանն ու Անահիտ Խառատյանը, ինչպես նաեւ Հայաստանի մինչեւ 18 տարեկանների չեմպիոնուհի Մարիա Գեւորգյանը եւ Սիրանուշ Ղուկասյանը:

Իհարկե, առանձնապես մեծ են սպասելիքները մեր ամենափորձառու շախմատիստուհի Էլինա Դանիելյանից, որը վերջին շրջանում կրկին վերագտել է իր խաղը ու վերելքով է հանդես գալիս: Նա իր անհատական վարկանիշով (2506) մրցաշարի մասնակիցների մեջ 7-րդն է: Էլինայից ավելի բարձր վարկանիշ ունեն միայն Նադեժդա (2567) եւ Տատյանա (2559) Կոսինցեւաները, Նանա Ձագնիձեն (2557), Աննա Մուզիչուկը (2537), Կատերինա Լահնոն (2530) եւ Ալեքսանդրա Կոստենյուկը (2522):



Եվրոպայի առաջնությունն անցկացվելու է շվեյցարական մրցակարգով, 11 տուրով: Մրցանակային ընդհանուր հիմնադրամը 88 հազար եվրո է: Երեկ երեկոյան Թբիլիսիում կայացավ մրցաշարի բացման արարողությունը, որին ներկա էր ՖԻԴԵ-ի նախագահ Կիրսան Իլյումժինովը: Իսկ այսօր գործի կդրվեն շախմատային ժամացույցները ու կսկսվի մրցավեճը Եվրոպայի չեմպիոնուհու տիտղոսի համար: Ուժեղագույնը ճանաչված շախմատիստուհին կպարգեւատրվի 20 հազար եվրոյով: 2-րդ եւ 3-րդ տեղերը գրաված շախմատիստուհիները կստանան համապատասխանաբար 15 եւ 10 հազար եվրո: Ընդհանուր առմամբ, պարգեւավճար կստանան լավագույն արդյունքի հասած 16 շախմատիստուհիներ:

## Պորտուգալական եզրափակիչ Դուբլինում

Հայտնի դարձան ֆուտբոլի Եվրոպայի լիգայի եզրափակչի մասնակիցները: Մայիսի 18-ին Դուբլինի «Դուբլին Արենա» մարզադաշտում պատվավոր մրցանակը կվիճարկեն պորտուգալական երկու ակումբները` «Պորտոն» եւ «Բրագան»:



«Պորտոն» դեռեւս առաջին խաղից հետո էր գործնականում լուծել եզրափակչի ուղեգրի հարցը` սեփական հարկի տակ 5-1 հաշվով ջախջախելով իսպանական «Վիլյառեալին»: Պատասխան խաղում թեեւ իսպանացիները ռեւանշի հասան 3-2 հաշվով, սակայն դա միայն սփոփանք էր: «Պորտոյի» կազմում գոլերից մեկն իր օգտին գրանցեց կոլումբիացի հարձակվող Ֆալկաոն, որն առաջին խաղում ֆուտբոլային պոկերի հեղինակ էր դարձել: Ֆալկաոն Եվրոպայի լիգայի ընթացիկ մրցաշարում գոլերի թիվը հասցրեց 16-ի ու գերազանցեց գերմանացի նախկին ֆուտբոլիստ Յուրգեն Քլինսմանի արդյունավետության ռեկորդը: Վերջինս ՈՒԵՖԱ-ի գավաթի 1995/96-ի խաղարկությունում «Բավարիայում» 15 գոլ էր խփել:

Եզրափակչի մյուս ուղեգրի բախտը վճռվեց «Բրագա»-«Բենֆիկա» պատասխան խաղում: Լիսաբոնում «Բենֆիկան» հաղթել էր 2-1 հաշվով, իսկ հյուրընկալվելիս զիջեց մրցակցին: Հանդիպման 19-րդ րոպեին Կուստոդիուն խփեց միակ գոլը եւ «Բրագային» եզրափակչի ուղեգիր պարգեւեց: «Բրագան» իրոք ընթացիկ մրցաշրջանի հայտնությունն է: Թիմը մի շարք տպավորիչ հաղթանակների շնորհիվ պայքարից դուրս մղեց եվրոպական հզոր ակումբներին եւ այժմ իրավունք է ստացել վիճարկելու պատվավոր մրցանակը: Եվրոպական մրցաշարերում «Բրագան» ի տարբերություն «Պորտոյի», դեռեւս տիտղոսներ չի նվաճել:

Ինչ խոսք, «Պորտոն» բավական փորձառու եւ տիտղոսակիր ակումբ է: 1893-ին հիմնադրված թիմը 2 անգամ նվաճել է չեմպիոնների գավաթը (1987, 2004-ին): 2003-ին դարձել է ՈՒԵՖԱ-ի գավաթակիր, 1984-ին արժանացել է Գավաթակիրների գավաթին: Երկու անգամ էլ (1987, 2004-ին) «Պորտոն» նվաճել է միջմայրցամաքային գավաթը, իսկ 1988-ին` Սուպերգավաթը: Եվրոգավաթներում թիմի կազմում բոլորից շատ խաղ է անցկացրել դարպասապահ Վիտոր Բայան (99), իսկ լավագույն ռմբարկուն Ֆալկաոն է (21 գոլ):

Եվրոպայի լիգայի մրցաշարերում առաջին անգամ եզրափակչում կմրցեն միեւնույն երկրի ներկայացուցիչները: Նախկինում նման դեպք ՈՒԵՖԱ-ի գավաթի մրցաշարում հանդիպել էր 7 անգամ: Առաջինը 1972-ին էր, որում հանդիպեցին անգլիական «Տոտենհեմն» ու «Վուլվերհեմփթոնը»: 2 խաղերի արդյունքով (2-1, 1-1) գավաթակիր դարձավ «Տոտենհեմը»: 1980-ին եզրափակիչը գերմանական էր: Հաջողությունն ուղեկցեց Ֆրանկֆուրտի «Այնտրախտին», որը շնորհիվ մրցակցի դաշտում խփած գոլերի, առավելության հասավ Մենխենգլադբախի «Բորուսիայի» նկատմամբ (2-3, 1-0):

1990-ին ՈՒԵՖԱ-ի գավաթը վիճարկեցին իտալական թիմերը` «Յուվենտուսն» ու «Ֆիորենտինան»: Պատվավոր մրցանակը 2-րդ անգամ ուղեւորվեց Թուրին, որտեղ «Յուվենտուսը» հաղթել էր 3-1 հաշվով: Պատասխան խաղում դարպասները մնացել էին անառիկ:

Հաջորդ երեք եզրափակիչները կրկին իտալական էին: 1991-ին «Ինտերը» հաղթեց «Ռոմային» (2-0, 0-1), 1995-ին «Պարման» առավելության հասավ «Յուվենտուսի» նկատմամբ (1-0, 1-1), իսկ 98-ին գավաթը կրկին նվաճեց «Ինտերը»` եզրափակչում 3-0 հաշվով հաղթելով «Լացիոյին»:

Առայժմ վերջին անգամ եզրափակչում միեւնույն երկրի ներկայացուցիչները հանդիպել են 2007-ին: Իսպանական «Սեւիլիան» 11 մ հարվածներով (հիմնական եւ լրացուցիչ ժամանակում` 2-2) պարտության է մատնել «Էսպանյոլին»:

## Դարչինյանը պատրաստ է կրկին ռինգ դուրս գալ

Թեթեւագույն քաշային կարգում աշխարհի նախկին չեմպիոն Յոնի Պերեսին հաղթելուց հետո Վախթանգ Դարչինյանը մտադիր է շուտով կրկին ռինգ դուրս գալ: Նա մարտահրավեր է նետել Աբներ Մարեսին եւ թեթեւագույն քաշային կարգում WBC-ի եւ WBO-ի վարկածներով աշխարհի ներկայիս չեմպիոն Նոնիտո Դոներին: Այս երկու բռնցքամարտիկներից էլ Վախթանգը ժամանակին պարտվել է եւ այժմ ցանկանում է ռեւանշի հասնել:

Հիշեցնենք, որ Նոնիտո Դոների հետ նա մենամարտել էր 2007-ի հուլիսին եւ անսպասելիորեն 5-րդ ռաունդում նոկաուտի էր ենթարկվել: Իսկ Մարեսի հետ Դարչինյանը մենամարտել էր անցյալ տարվա դեկտեմբերին թեթեւքաշային կարգի 4 ուժեղագույն բռնցքամարտիկների մրցաշարում, որում պարտվել էր միավորներով: Դոներին Դարչինյանը բազմիցս է մարտահրավեր նետել, սակայն վերջինս մշտապես տարբեր պատճառաբանություններով հրաժարվել է մենամարտից:

«Ցանկանում եմ հնարավորինս շուտ ռինգ վերադառնալ ու մենամարտել Աբներ Մարեսի հետ: Պատրաստ եմ թեկուզ հենց վաղը ռինգ դուրս գալ: Եթե նա չհամաձայնվի առաջիկա 2-3 ամիսներին ինձ հետ մենամարտել, ապա այլեւս նրան չեմ սպասի: Եթե թեթեւագույն քաշային կարգում ինձ հետաքրքրող մենամարտ չգտնեմ, ապա կտեղափոխվեմ առաջին կիսաթեթեւ կամ նույնիսկ կիսաթեթեւքաշային կարգ», հայտարարել է Վախթանգ Դարչինյանը:

### ՀԱՎԱԿՆՈՐԴՆԵՐԻ ՄՐՑԱՇԱՐ

## Ոչ-ոքի` կարճատեւ պայքարից հետո

**Կազանում ընթացող հավակնորդների մրցաշարի մեկնարկային տուրում 6,5-ժամյա երկարատեւ պայքարից հետո հաշտություն կնքելով, Լեւոն Արոնյանն ու Ալեքսանդր Գրիշչուկը հաջորդ տուրում առաջինն ավարտեցին իրենց մրցավեճը: Արդեն 22-րդ քայլին մրցակիցները հաշտության ձեռք մեկնեցին: Այսպիսով, 2 տուրից հետո Արոնյանի եւ Գրիշչուկի մրցավեճում հաշիվը հավասար է` 1-1: Այսօր կայանալիք 3-րդ պարտիայում սպիտակներով խաղալու է Արոնյանը:**

**Հավակնորդների մրցաշարի անդրանիկ հաղթանակն իր օգտին գրանցեց ԱՄՆ-ի չեմպիոն Գատա Կամսկին, որը սեւերով ուժեղ գրոհ կազմակերպելով մրցակցի արքայի վրա, մատի սպառնալիքի տակ ստիպեց Թոփալովին 31-րդ քայլին հանձնվել: Կամսկին մրցախաղը տանում է 1,5-0,5 հաշվով:**

**Տուրի մյուս երկու պարտիաներում կրկին ոչ-ոքի արդյունք գրանցվեց: Գելֆանդ-Մամեդյարով մրցավեճում մրցակիցները հաշտություն կնքեցին 40-րդ քայլին: Իսկ Կրամնիկն ու Ռաջաբովը վերջինն ավարտեցին հանդիպումը` խաղաղ դաշն կնքելով 61-րդ քայլին: Երկու մրցախաղերում էլ հաշիվը հավասար է` 1-1:**

## Մելքումյանը շարունակեց հաղթարշավը

**Սարաեւոյում ընթացող շախմատի մրցաշարում հաղթարշավն է շարունակում Հրանտ Մելքումյանը: Նա 3-րդ անընդմեջ հաղթանակը տոնեց` պարտության մատնելով Մաթեյ Սեբենիկին: 4-րդ տուրում Հրանտը սպիտակներով կխաղա թուրք շախմատիստ Էմրե Կանի հետ:**

**3 տուրից հետո Մելքումյանը 9 միավորով Լուկա Լենիչի, Իվան Սարիչի, Դուշան Պոպովիչի, Քրիստիան Սաբոյի ու Էմրե Կանի հետ գլխավորում է աղյուսակը:**

## Կրկին պարտություն

**Թենիսի Հայաստանի կանանց հավաքականը ֆեդերացիայի գավաթի մրցաշարի 2-րդ տուրում էլ պարտություն կրեց: Այս անգամ մեր թենիսիստուհիները 0-3 հաշվով զիջեցին Թուրքիայի հավաքականին: Աննա Մովսիսյանը 2-6, 3-6 հաշվով զիջեց Պեմրա Օզգենին: Անի Ամիրաղյանը պարտվեց Կազլա Բույուկակչային (3-6, 2-6): Զուգախաղում էլ Մովսիսյան-Ամիրաղյան զույգը չկարողացավ լուրջ դիմադրություն ցույց տալ Իպեկ Սենօղլու-Մելիս Սեզեր երկյակին (1-6, 4-6):**

**Այսպիսով, Հայաստանի հավաքականը 2 տուրից հետո դեռեւս միավոր չի վաստակել ու եզրափակում է 2-րդ ենթախմբի աղյուսակը: Առաջատարը Բոսնիայի ընտրանին է, որը 2-1 հաշվով պարտության մատնեց վրացուհիներին: Առաջին ենթախմբում իր անդրանիկ հանդիպումը հաղթանակով սկսեց Պորտուգալիայի հավաքականը` 2-1 հաշվով առավելության հասնելով Մարոկկոյի թենիսիստուհիների նկատմամբ:**

## Մահացել է Գեորգի Սարկիսյանցը

**Երկարատեւ հիվանդությունից հետո 78 տարեկանում մահացել է մարզական հայտնի լրագրող ու հեռուստառադիոմեկնաբան Գեորգի Սարկիսյանցը: Նա ԽՍՀՄ-ի հեռուստառադիոպետկոմում սկսել էր աշխատել 1959-ից: Մի քանի տասնամյակ շարունակ անվանի հեռուստամեկնաբանը օլիմպիական խաղերից, աշխարհի ու Եվրոպայի առաջնություններից, միջազգային խոշոր մրցաշարերից ռեպորտաժներ է վարել: Նա նաեւ վարել է «Գոլեր, միավորներ, վայրկյաններ» հեղինակային ծրագիրը, իսկ հետագայում Նիկոլայ Օզերովի եւ Վլադիմիր Պերետուրինի հետ «Ֆուտբոլային տեսություն» հաղորդաշարի համահեղինակներից մեկն էր:**

**Լենինգրադի պետական համալսարանի ժուռնալիստիկայի ֆակուլտետն ավարտելուց հետո Գեորգի Սարկիսյանցը Յան Սպարեի հետ մարզական առաջին հեռուստամեկնաբաններն էին: Բացի ֆուտբոլից, Սարկիսյանցի սիրելի մարզաձեւերն էին բռնցքամարտը (10 տարի պարապել է այդ մարզաձեւով) եւ գեղասահքը: 1999-ին նա նշել էր մարզական մեկնաբանի գործունեության 40-ամյակը, հետագայում աշխատում էր «Եվրոսպորտ-Ռուսաստան» ալիքում: Գեորգի Սարկիսյանցը մարզական առաջին մեկնաբանն էր, որն արժանացել էր մշակույթի վաստակավոր աշխատողի կոչման:**

## Մարադոնայի դիմանկարը ցանկանում են տեսնել թղթադրամի վրա




**Facebook սոցիալական կայքում արգենտինացի ֆուտբոլասերները լայն գործունեություն են ծավալել, որպեսզի լեգենդար հարձակվող Դիեգո Մարադոնայի դիմանկարը տեղադրվի 10 պեսո արժողությամբ թղթադրամի վրա: Այդ նախաձեռնության կողմնակիցների թիվն արդեն հասել է 15 հազարի:**

**Ներկայումս 10 պեսո արժողությամբ թղթադրամի վրա պատկերված է արգենտինացի քաղաքական գործիչ Մանուել Բելգրանոյի դիմանկարը: Ֆուտբոլասերների կարծիքով Դիեգո Մարադոնան Արգենտինայի համար շատ ավելին է արել, քան Բելգրանոն:**

**Ֆուտբոլասերների խմբի անդամները նույնիսկ արդեն ստեղծել են թղթադրամի նմուշը, որի վրա պատկերված է 1986-ի աշխարհի առաջնության ժամանակ Դիեգո Մարադոնայի դիմանկարը: Ֆուտբոլասերներից շատերը նաեւ իրենց սերն են արտահայտել համաշխարհային ֆուտբոլի երբեմնի «աստղի» նկատմամբ` ուղարկելով «Ես քեզ սիրում եմ, Դիեգո», «Բոլոր ժամանակների լավագույն ֆուտբոլիստը» մակագրություններով հաղորդագրություններ:**

## Պարգեւավճարը կաճի

Թենիսի «Մեծ սաղավարտ» մրցանակի շարքին դասվող «Ռոլան Գարոսի» մրցաշարի մրցանակային ընդհանուր հիմնադրամն այս տարի կկազմի 25 մլն դոլար: Տղամարդկանց եւ կանանց մենախաղերի հաղթողների պարգեւավճարն աճել է 7,14 տոկոսով եւ այժմ կազմում է 1,7 մլն դոլար: Հիշեցնենք, որ Ուիմբլդոնի մրցաշարի կազմակերպիչներն էլ 10 տոկոսով բարձրացրել էին մրցանակային հիմնադրամի չափը:

*Էջը պատրաստեց* **ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ**

